

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ	7
3. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	10
3.1. Ռազմավարական ուղղություն 1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման հետևանքների մասին բնակչության իրազեկում	10
3.2. Ռազմավարական ուղղություն 2. Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման և չարաշահման կանխարգելում	15
3.3. Ռազմավարական ուղղություն 3. Դատապարտյալների և ազատությունից զրկված այլ անձանց շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելում	21
3.4. Ռազմավարական ուղղություն 4. Զինծառայողների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելում	25
3.5. Ռազմավարական ուղղություն 5. Թմրամիջոցների օրինական շրջանառությանը վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործում, ապօրինի թմրամիջոց գործածող անձանց համար սահմանափակումների նախատեսում	28
4. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ, ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ՀԱՄԱՐԺԵՔ ՆՅՈՒԹԵՐԻ (ԱՆԱԼՈԳՆԵՐԻ) ԵՎ ԱԾԱՆՅՅԱԼՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ	30
4.1. Ռազմավարական ուղղություն 6. Մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի ներկրման կանխարգելում	32
4.2. Ռազմավարական ուղղություն 7. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության առնչությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության և նախաքննության արդյունավետության բարձրացում	34
4.3. Ռազմավարական ուղղություն 8. Համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելում	37

4.4. Ռազմավարական ուղղություն 9. Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների զարգացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում.....	38
4.5. Ռազմավարական ուղղություն 10. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում և հանրային ծառայությունում թմրամիջոցների չարաշահման դեմ պայքար	40
4.6. Ռազմավարական ուղղություն 11. Ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում	41
5. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾԱԾՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	43
5.1. Ռազմավարական նպատակ 12. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման, անհրաժեշտ աջակցող ծառայությունների տրամադրում և հանրային առողջության ապահովում	46
5.2. Ռազմավարական ուղղություն 13. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմամբ պայմանավորված խանգարումներ կամ վարքային ու սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց կայուն վերականգնման աջակցություն և սոցիալական վերաինտեգրում	50
6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	54
7. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	56

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը մեծ վտանգ է ներկայացնում մարդու առողջության, հանրային առողջության և միջազգային հանրության անվտանգության համար: ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի՝ 2024 թվականի «Աշխարհի թմրամիջոցների զեկույցի» (այսուհետ՝ Ձեկույց)¹ համաձայն՝ համաշխարհային մակարդակում վերջին տասնամյակում գրանցվել է թմրամիջոցների գործածման աճ, որը կազմել է մոտ 20%: Ըստ Ձեկույցի՝ 15-64 տարեկան յուրաքանչյուր 18 անձից 1-ը վերջին 12 ամսում գործածել է թմրամիջոցներ, և յուրաքանչյուր 81 անձից մեկն ունի թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ (drug use disorder): Ընդ որում, ամբողջ աշխարհում թմրամիջոցներ գործածող անձանց մոտ 1/4-ը կազմում են կանայք: Համաշխարհային մակարդակում թմրամիջոցների ապօրինի շրջանառության ռեկորդային մակարդակը և թմրամիջոցների շուկաների ընդլայնումը պարտավորեցնում են զարգացնելու այս ոլորտում պետական քաղաքականությունը:

2. Նշված ոլորտում իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ մտահոգիչ և բնութագրվում է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և իրավախախտումների աճող մակարդակով, դրանց արդյունքում գոյացած եկամուտների օրինականացման ռիսկերի բարձրացմամբ, թմրամիջոցներ գործածող անձին և նրա սոցիալական միջավայրին տրամադրվող սոցիալական աջակցության կարիքի աճով:

3. Նոր տեխնոլոգիաների ոլորտում առաջընթացի շնորհիվ առցանց շուկաները, սոցիալական մեդիա հարթակներն ու ցանցերը դարձել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության կազմակերպման հիմնական վայրեր: Կրիպտոարժույթը նույնպես ակտիվորեն օգտագործվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը դյուրին դարձնելու համար, ինչը լուրջ խոչընդոտ է իրավապահ մարմինների աշխատանքի համար:

4. Քանի որ տեխնոլոգիական առաջընթացը շարունակաբար օգտագործվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հեշտացնելու համար, իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու և քննելու համար ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը նույնպես կարևոր է: Ոստիկանության

¹ Հասանելի՝ <https://www.unodc.org/unodc/en/data-and-analysis/world-drug-report-2024.html>

բարեփոխումների շրջանակներում Քրեական ոստիկանությունում ստեղծվել է Համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժինը, որի ջանքերի շնորհիվ 2024 թվականին աճել են համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության հայտնաբերման դեպքերը, մասնավորապես՝ հայտնաբերվել է 321 դեպք: Միաժամանակ, այս ոլորտում իրավապահ մարմինների աշխատանքի լավարկման, ժամանակակից գործիքների և մեթոդաբանության կիրառման անհրաժեշտությունը ևս առկա է: Ընդ որում, կարևոր է, որ իրավապահ մարմինների աշխատանքը գլխավորապես տարվի երկու ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների ներմուծում և երկրում թմրամիջոցների արտադրություն՝ կենտրոնացնելով ջանքերին ապօրինի շրջանառության սկզբնաղբյուրների կամ առաջնային օղակների վրա:

5. Նկատի ունենալով թմրամիջոցների ապօրինի շրջանառության անդրազգային բնույթը՝ առանձնահատուկ կարևորություն ունի նաև այս ոլորտում արդյունավետ և գործուն միջազգային համագործակցության զարգացումը: Բացի այդ, քանի որ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը նպաստում է ահաբեկչության, թրաֆիքինգի, կոռուպցիայի, ինչպես նաև կազմակերպված հանցավորության այլ տեսակների ֆինանսական բազայի ընդլայնմանը, դրա կանխարգելումն անհապաղ և առաջնահերթ ուշադրություն է պահանջում:

6. Ե՛վ 2023, և՛ 2024 թվականները Ներքին գործերի նախարարության կողմից հայտարարվել են որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարիներ: 2024 թվականի փետրվարին Կառավարության որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով, որն ապահովում է այս ոլորտում իրավասու պետական մարմինների միջև մշտական հաղորդակցությունը:

7. Միաժամանակ, առանցքային է, որ պետական քաղաքականությունը պատշաճ և համընդգրկուն ձևով ներառի ոչ միայն թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը, այլ նաև հանրային առողջության խնդիրներին արձագանքը և անհատների առողջության, այդ թվում՝ հոգեկան առողջության, ու սոցիալական ինտեգրման համար անհրաժեշտ պայմանները խթանելուն, խոչընդոտները վերացնելուն կամ նվազեցնելուն և հնարավոր բացասական հետևանքները կանխարգելելուն ու չեզոքացնելուն ուղղված քայլերը: Ոչ բժշկական նպատակներով թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ կամ խնդիրներ ունեցող անձանց բուժման և վերականգնման համար պետք

է որդեգրվեն ապացուցահեն և էթիկական նոր մեթոդներ և մոտեցումներ՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման միջազգային չափանիշներին»² (այսուհետ՝ ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներ) համապատասխան: Առանցքային է, որ նշված մոտեցումները և մեթոդները հիմնվեն մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքի վրա և ներառեն գենդերարձագանքող (gender responsive) մոտեցումներ, որոնք հաշվի են առնում և հասցեագրում են գենդերային ինքնությունը, այդ թվում՝ կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների կողմից աջակցություն ստանալու և խարանը հաղթահարելու յուրահատուկ խոչընդոտները:

8. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները կարող են հանգեցնել լուրջ առողջական հետևանքների, այդ թվում՝ մահվան: Թմրամիջոցների գործածման կանխարգելումն ու թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժումը սահմանվել են որպես ՄԱԿ-ի կայուն զարգացման 3-րդ նպատակի թիրախ (կետ 3.5): Զեկույցի համաձայն՝ 2019 թվականի դրությամբ ամբողջ աշխարհում տարեկան թմրամիջոցների գործածման հետ ուղղակի կապ ունեցող առնվազն 160.000 մահ է գրանցվել: Ընդ որում, թմրամիջոցների գործածման հետևանքով մահացության թվերը տարեց տարի աճում են:

9. Թմրամիջոցների ներարկային օգտագործումը լրացուցիչ ռիսկեր է առաջացնում հանրային առողջության տեսանկյունից, հատկապես՝ կապված սեռավարակներով, ՄԻԱՎ-ով և B, C հեպատիտներով վարակվելու վտանգի հետ: Զեկույցի համաձայն՝ 2022 թվականի դրությամբ թմրամիջոցներ ներարկային օգտագործող (այսուհետ՝ ԹՆՕ) մոտ 1.6 միլիոն մարդ ապրում են ՄԻԱՎ-ով, որը կազմում է ԹՆՕ-ների մոտ 1/8-րդ մասը: ԹՆՕ-ների կողմից ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը մոտ 14 անգամ ավելի մեծ է, քան բնակչության մնացած հատվածի: Ընդ որում, Զեկույցի համաձայն՝ ԹՆՕ կանայք բախվում են առողջական և սոցիալական առավել ծանր հետևանքների. 58 պետությունից հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ թմրամիջոցների ներարկային օգտագործման հետևանքով կանանց՝ ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը մոտ 1.2 անգամ ավելի է, քան տղամարդկանց դեպքում: ԹՆՕ կանայք առավել խոցելի են նաև ընտանիքի անդամների, զուգընկերների և այլ դերակատարների կողմից բռնության ենթարկվելու տեսանկյունից: Բացի այդ, 2022 թվականի դրությամբ

² Հասանելի՝ https://www.unodc.org/documents/drug-prevention-and-treatment/UNODC-WHO_International_Standards_Treatment_Drug_Use_Disorders_April_2020.pdf

ամբողջ աշխարհում ԹՆՕ-ների գրեթե 50%-ի մոտ ախտորոշվել է հեպատիտ C: Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատականների համաձայն՝ հեպատիտ C-ով վարակված անձանց մոտ 23%-ը ԹՆՕ-ներ են:

10. Կարևոր է նաև, որ պետական քաղաքականությունը հաշվի առնի թմրամիջոցներ գործածող կամ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող ազգաբնակչության տարբեր խմբերի կարիքներն ու առանձնահատկությունները, ինչպես, օրինակ՝ կանանց, անչափահասների և անձանց, որոնք բախվում են քրեական արդարադատության համակարգին: Ձեկույցի համաձայն՝ չնայած նրան, որ վերջին տարվա ընթացքում թմրամիջոցներ գործածած յուրաքանչյուր չորս անձից մեկը կին է, ամբողջ աշխարհում կանանց դեպքում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման ընդգրկումն ավելի քիչ է, քան տղամարդկանց: Այլ խոսքերով, թմրամիջոցներ գործածող կանանց ավելի փոքր մասն է ստանում անհրաժեշտ բուժում, քան տղամարդկանց:

11. Բացի այդ, Ձեկույցով նաև նշվել է, որ թմրամիջոցների գործածումը, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները և թմրամիջոցների ներարկային օգտագործումը, որպես կանոն, ավելի հաճախ են հանդիպում որոշակի բնակության վայր չունեցող, հոգեկան առողջության ծանր խնդիրներ ունեցող և կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող անձանց մոտ: Նման իրավիճակն անխուսափելի հրամայական է ստեղծում Կառավարության համար՝ վերանայել ինչպես կանխարգելման, այնպես էլ բուժման, խնամքի և վերականգնման միջոցները՝ դրանք ապացուցահեն, առողջության վրա կենտրոնացված, գենդերազգայուն դարձնելու և բնակչության տարբեր խմբերի կարիքները հաշվի առնելու նպատակով:

12. Վերոգրյալի համատեքստում է, որ ՄԱԿ-ի թմրամիջոցների հարցերով հանձնաժողովի 67-րդ բարձր մակարդակի նիստին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանձնառել է մինչև 2025 թվականը մշակել այս ոլորտում պետական քաղաքականությունն արտահայտող ազգային ռազմավարական փաստաթուղթ:

13. Ինչպես արդեն նշվեց, պետական քաղաքականությունը պետք է ինչպես հասցեագրի թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, այնպես էլ նպաստի թմրամիջոցներ գործածող անձանց ապացուցահեն, էթիկական բուժման և խնամքի, սոցիալական վերականգնման, ներառյալ՝ սոցիալ-հոգեբանական աջակցության ապահովմանը: Միաժամանակ, նկատի ունենալով ինչպես անհատի, այնպես էլ հանրային

առողջապահության տեսանկյունից թմրամիջոցների գործածման վտանգները և հաշվի առնելով թմրամիջոցների ապօրինի շրջանառության անդրազգային բնույթը, առանցքային են թմրամիջոցների գործածման կանխարգելումը և այս ոլորտում միջազգային համագործակցության զարգացումը:

14. Ըստ այդմ, Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) 3 ռազմավարական նպատակներն են՝

1) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման կանխարգելում.

2) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության դեմ պայքար.

3) թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց ապացուցահեն, էթիկական, գենդերազգայուն բժշկական օգնության, վերականգնման և վերաինտեգրման, ինչպես նաև հանրային առողջության պահպանման ապահովում:

2. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

15. Հայաստանի Հանրապետությունում տարեցտարի աճում է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 393-406-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների թիվը: Մասնավորապես, ըստ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2018 թվականին գրանցվել է նշված հանցանքների 877, 2019 թվականին՝ 1088, 2020 թվականին՝ 1226, 2021 թվականին՝ 1544, 2022 թվականին՝ 2266, 2023 թվականին՝ 5070, իսկ 2024 թվականին՝ 3639 դեպք: Ըստ այդմ, 2018 թվականից մինչև 2022 թվականը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է թմրամիջոցների հետ կապված հանցանքների թվի մոտ 158%, իսկ 2022 թվականից մինչև 2024 թվականի ավարտը՝ 60,6% աճ: Միաժամանակ, 2025 թվականի առաջին ամիսներին գրանցվել է ավելի ցածր ցուցանիշ՝ 2024 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ: Այսպես, 2025 թվականի առաջին 4 ամիսների ընթացքում արձանագրվել է ապօրինի շրջանառության 1161 դեպք, որը

152 դեպքով կամ 11.6%-ով պակաս է 2024 թվականին նույն ժամանակահատվածում արձանագրված դեպքերի քանակից:

16. Դատախազության տվյալների համաձայն՝ 2024 թվականին թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների ընդհանուր թվի 28.2%-ով նվազումը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ 2023 թվականի ընթացքում ապօրինի պահվող թմրամիջոցների հայտնաբերման բոլոր դեպքերում քրեական վարույթները նախաձեռնվել են Քրեական օրենսգրքի 393-րդ և 396-րդ հոդվածների հատկանիշներով, իսկ 2024 թվականի ընթացքում անձանց մոտ ապօրինի պահվող մանր չափի բուսական ծագում ունեցող թմրամիջոցների հայտնաբերման դեպքում, երբ բացակայել են նշված թմրամիջոցի ապօրինի իրացման առերևույթ դեպքի մասին փաստական տվյալներ, քրեական վարույթներ չեն նախաձեռնվել, իսկ կազմված փաստաթղթերն ուղարկվել են իրավասու մարմնին՝ մանր չափերով թմրամիջոց ապօրինի պահելու կամ օգտագործելու համար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար: Հարկ է նկատել, որ ընդհանուր թվի նվազումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ աճել են թմրամիջոցների մաքսանենգության բացահայտման դեպքերը, ինչի արդյունքում նվազել են Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների ներմուծմանը հաջորդող ապօրինի շրջանառության դեպքերը:

17. Գրանցվել է նաև թմրամիջոցների հետ կապված վարչական իրավախախտումների դեպքերի որոշակի աճ: Մասնավորապես, 2021 թվականին արձանագրվել է նման 298, 2022 թվականին՝ 363, 2023 թվականին՝ 387, իսկ 2024 թվականին՝ 633 դեպք: Ըստ այդմ, 2019 թվականից մինչև 2024 թվականի ավարտն ընկած ժամանակահատվածում աճը միջինում կազմել է 21,2%:

18. Ըստ Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տվյալների՝ աճել է նաև թմրանյութեր գործածող անձանց թիվը: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառված է եղել 6951 անձ, այդ թվում՝ 116 կին և 5 անչափահաս, 2019 թվականին՝ 7209 անձ, այդ թվում՝ 132 կին և 8 անչափահաս, 2020 թվականին՝ 7392 անձ, այդ թվում՝ 141 կին և 6 անչափահաս, 2021 թվականին՝ 7570 անձ, այդ թվում՝ 149 կին և 4 անչափահաս, 2022 թվականին՝ 7612 անձ, այդ թվում՝ 151 կին և 6 անչափահաս, 2023 թվականին՝ 7772 անձ, այդ թվում՝ 180 կին և 7 անչափահաս, իսկ 2024 թվականին՝ 7801 անձ, որոնցից 183 կին և 8 անչափահաս: Այս տվյալներում ներառված են ինչպես բուժման

նպատակով ընդունված, այնպես էլ իրավապահ մարմինների որոշումներով թունաքիմիական հետազոտության արդյունքում հաշվառված անձինք: Հաշվառված անձանց շրջանում առավել մեծ թիվ են կազմում կաննաբինոիդների խմբի թմրամիջոցներ գործածող անձինք, որոնց հաջորդում են ափիոնատիպ նյութեր գործածող անձինք:

19. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում վերջին տարիներին հայտնաբերվել և ապօրինի շրջանառությունից առգրավվել են տարբեր տեսակի թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր և դրանց պրեկուրսորներ, այդ թվում՝ «մարիխուանա», «հաշիշ», «կոկաին», «ափիոն», «հերոին», «մեթադոն» և այլն: Ընդ որում, հատկապես լայն տարածում ունի կանեփից պատրաստված թմրամիջոցների գործածումը («մարիխուանա», «հաշիշ»), որը վայրի կերպով աճում է հանրապետության ողջ տարածքում: Այդ թմրամիջոցները մատչելի են հասանելիության և գնային տեսանկյուններից:

20. Տարեցտարի աճում են նաև բնակչության առողջության համար առավել վտանգ ներկայացնող սինթետիկ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները:

21. Իրանի Իսլամական Հանրապետությունից են ներկրվում հանրապետության տարածքում սպառվող «հերոին», «ափիոն», «մեթամֆետամին» և «հաշիշ» տեսակի թմրամիջոցները: Վերջին տարիներին արձանագրվում են Ռուսաստանի Դաշնությունից և Ուկրաինայից «մեֆեդրոն» և «ալֆա-ՊՎՊ» տեսակի թմրամիջոցների ներմուծման դեպքեր: Միևնույն ժամանակ, եվրոպական երկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից փոստային առաքանիների միջոցով հանրապետություն ապօրինի ներկրվում են «մարիխուանա», «կոկաին», «հաշիշի յուղ», «մեթադոն», «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաև տարբեր տեսակի հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր: Հատկապես ավելացել են «մեթամֆետամին», «ալֆա-ՊՎՊ», «մեֆեդրոն» և «հերոին» տեսակի թմրամիջոցների շրջանառության դեպքերը, որոնք ամբողջությամբ ներկրվում են արտերկրից:

22. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում թմրամիջոցների արագ տարածման միջոց է դարձել համացանցը: Համացանցում տեղադրված հրապարակային գովազդների միջոցով հնարավոր է դարձել ձեռք բերել և փոխանցել թմրամիջոցներ, վճարել դրանց համար առցանց դրամական փոխանցումներով:

23. Ուսումնասիրությունները և մշտադիտարկումը ցույց են տալիս, որ միայն «Տելեգրամ» սոցիալական հարթակում առկա են թմրամիջոցների անօրինական

շրջանառությամբ զբաղվող, թմրամիջոցներ գովազդող կամ դրանց մասին այլ տեղեկատվություն տրամադրող բազմաթիվ ալիքներ, որոնց թիվն օրեցօր աճում է:

3. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

3.1. Ռազմավարական ուղղություն 1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման հետևանքների մասին բնակչության իրազեկում

24. Թմրամիջոցների գործածման հասցեագրման, անհատի և հանրային առողջության պահպանման տեսանկյունից առաջնային կարևորություն ունի թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման կանխարգելումը:

25. Կանխարգելմանն ուղղված միջոցառումները նպատակ ունեն կանխելու անհատների կողմից թմրամիջոցների գործածումը և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորումը:

26. Կանխարգելմանն ուղղված միջոցառումները տարաբնույթ են և ներառում են ինչպես թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների և ռիսկերի մասին բնակչության իրազեկվածությունն ապահովելուն ուղղված, այնպես էլ միջավայրային փոփոխություններ ստեղծող գործողություններ, որոնք կնպաստեն հնարավոր ռիսկային խմբերի բարեկեցությանը և հատկապես՝ անչափահասների առողջ և ապահով զարգացմանը և այդպիսով կնվազեցնեն նրանց կողմից թմրամիջոցներ գործածելու և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման ռիսկերը:

27. Թմրամիջոցների գործածման հետևանքների մասին բնակչության իրազեկումն ուղղված է նաև ապահովելուն, որ թմրամիջոցների գործածման վերաբերյալ որոշումն անձանց կողմից կայացվի այն պայմաններում, երբ նրանք հնարավորինս տեղեկացված են և ամբողջությամբ գիտակցում են իրենց կողմից թմրամիջոցներ գործածելու հնարավոր վնասները: Թմրամիջոցների գործածման կանխարգելման միջազգային չափանիշների³ համաձայն՝ թմրամիջոցների և դրանց գործածման հետևանքների վերաբերյալ գիտելիքի պակասն անհատի խոցելիությունը մեծացնող բազմաթիվ գործոններից է:

³ Հասանելի՝ https://www.unodc.org/documents/prevention/UNODC-WHO_2018_prevention_standards_E.pdf

28. Ներքին գործերի նախարարությունը պարբերաբար տարածում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև իրականացնում ապօրինի շրջանառության բացահայտված առանձին դեպքերի լուսաբանում: Նմանապես, Առողջապահության նախարարությունը և Կախվածությունների բուժման ազգային կենտրոնն իրականացնում են թմրամիջոցների գործածման վնասների, ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածում սոցիալական ցանցերի միջոցով: Միաժամանակ, անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման առավել համակարգված միջոցառումներ:

29. Ըստ այդմ, նշված ոլորտում անհրաժեշտ է՝

1) զանգվածային լրատվության և տեսալսողական մեդիայի միջոցով համակարգային կերպով լուսաբանել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ իրականացվող միջոցառումները, ինչը ենթադրում է մի քանի հարթակների (տեսալսողական մեդիա, սոցիալական ցանցերում իրավասու պետական մարմինների պաշտոնական էջեր, առցանց լրատվամիջոցներ) օգտագործմամբ հանրությանը ամփոփ տեղեկատվության տրամադրում նշված ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Ընդ որում, կարևոր է, որ նման տեղեկատվության տրամադրումն իրականացվի զգայուն կերպով՝ բացառելով թմրամիջոցներ գործածող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներով ապրող անձանց խարանավորումը:

2) իրականացնել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման վնասների, վնասների նվազեցման կամ արձագանքման եղանակների վերաբերյալ տեղեկատվական արշավներ՝ մշակելով դրանք նախնական հետազոտությունների վրա և ապահովելով համապատասխանությունը ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափանիշներին: Նման արշավները պետք է իրականացվեն տարբեր ձևաչափերով և տարբեր հարթակների միջոցով՝ ներառելով տեսանյութեր, տեքստային նյութեր, պաստառներ և այլն: Նման մոտեցումը կապահովի արշավի նյութերի հասանելիությունն առավել լայն լսարանին, և կոյուրացնի արշավի շրջանակներում ընտրված հիմնական ուղերձների ընկալումը բնակչության տարբեր խմբերի կողմից: Առանցքային է, որ տեղեկատվական նյութերն անդրադառնան ոչ միայն անհատի առողջության տեսանկյունից առկա վտանգներին, այլ նաև սոցիալ-հոգեբանական հետևանքներին, ինչպես նաև

հանրային առողջության տեսանկյունից առկա խնդիրներին: Ընդ որում, տեղեկատվական նյութերը պետք է մշակվեն այնպիսի մեթոդաբանությամբ, որը կբացառի դրանց հնարավոր գովազդային ազդեցությունը: Այսինքն, պետք է ապահովվի տեղեկատվական նյութերի կանխարգելիչ նշանակությունը՝ բացառելով հատկապես անչափահասների և երիտասարդների կողմից այդ նյութերի արդյունքում թմրամիջոցների գործածման նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու կամ զարգացնելու հնարավորությունը: Հանրային առողջության վերաբերյալ իրազեկման տեսանկյունից հատկապես կարևոր է, որ տեղեկատվական նյութերից առնվազն մեկն անդրադառնա թմրամիջոցների ներարկային օգտագործմանը՝ նշելով նաև, թե գործածմանը զուգորդող ինչպիսի վարքն է, որ մեծացնում է ՄԻԱՎ-ով կամ այլ վարակներով վարակվելու ռիսկը: Կարևոր է նաև, որ իրազեկող նյութերը զերծ լինեն թմրամիջոցներ գործածող անձանց թիրախավորող, նրանց խարանավորող, նրանց նկատմամբ խտրականություն և անհանդուրժողականություն հարուցող բովանդակությունից.

3) ապահովել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ սեռի, տարիքի և բնակության վայրի հիմքով դասակարգված տվյալների հավաքագրումը: Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների գործածման մասին ամբողջական վիճակագրությունը սոցիալական հարցումների միջոցով հավաքագրվել է դեռևս 2002 թվականին՝ Առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված «ՄԻԱՎ վարակի տարածման իրավիճակի արագ գնահատման, ներառյալ ներարկային թմրամիջոցներ օգտագործողների շրջանում» հետազոտության շրջանակներում: Առողջապահության ազգային ինստիտուտի՝ թմրամիջոցների վերաբերյալ ամենամյա զեկույցներում հղում է կատարվում հենց այս վիճակագրությանը: Վերջին 22 տարվա ընթացքում ոչ միայն միջազգային, այլ նաև ազգային մակարդակում թմրամիջոցների գործածման հետ կապված տեղի են ունեցել էական փոփոխություններ, այդ թվում՝ կապված տարածված թմրատեսակների հետ, ինչպես նաև այն հարթակների, որոնց միջոցով կատարվում է թմրամիջոցների իրացումը: Թմրամիջոցների գործածման վիճակի վերաբերյալ համապարփակ տվյալների առկայությունը հիմնաքարային նշանակություն ունի թմրամիջոցների գործածման կանխարգելման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման ու վերականգնման արդյունավետ, ապացուցահեն և էթիկական քաղաքականության մշակման և

իրականացման, խնդիրների ու դրանց պատճառների կամ փոխկապակցված պայմանների վերհանման տեսանկյունից: Ընդ որում, առանցքային է նաև սեռի հիմքով դասակարգված տվյալների առկայությունը, ինչը թույլ կտա բացահայտել գենդերային հիմքով առկա միտումները և տարբերությունները: Սա կաջակցի քաղաքականությունը մշակողներին և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնողներին խնդիրների թիրախային արձագանքման միջոցներ ձեռնարկելու հարցում՝ թույլ տալով հասցեագրելով գենդերային առանձնահատկություններով պայմանավորված յուրահատուկ կարիքները: Հետևաբար, հաշվի առնելով վերջին տարիներին առկա միտումների ու զարգացումների վերաբերյալ համապարփակ տվյալներ ունենալու անհրաժեշտությունը՝ պետք է Առողջապահական համաշխարհային կազմակերպության ստանդարտներին, այդ թվում՝ ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներին համապատասխան իրականացնել տվյալների հավաքագրմանն ուղղված հետազոտություն.

4) ստեղծել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչական տվյալների էլեկտրոնային շտեմարան: Արդյունավետ քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման տեսանկյունից կարևոր է նաև համընդգրկուն և սեռի հիմքով դասակարգված վարչական տվյալների առկայությունը, որոնք կներառեն թմրամիջոցների գործածման, ապօրինի շրջանառության և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման ու սոցիալական վերականգման, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանական աջակցության ամբողջ շղթան՝ ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներին համապատասխան: Վարչական տվյալները պետք է ընդգրկեն քրեական արդարադատության, առողջապահական, սոցիալական աջակցության համակարգերի տվյալները և առկայության դեպքում՝ հետազոտվի դարձնեն թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձի բուժման և սոցիալական վերականգնման աշխատանքներն ու դրանց փոխկապակցվածությունը քրեական հետապնդման հետ: Կարևոր է, որ էլեկտրոնային համակարգն ունենա տվյալների լրացման պատասխանատվություն կրող յուրաքանչյուր մարմնի առանձին պատուհան, և նույն անձի վերաբերյալ տարբեր մարմինների կողմից լրացված տվյալներն ինքնաշխատ կերպով ամփոփվեն (օրինակ՝ ըստ անձը հաստատող փաստաթղթի համարի)՝ ապահովելով տվյալ անձի հետ կապված առկա գործընթացների հետազոտվելությունը: Նման համակարգի առկայությունը թույլ կտա գնահատել տարբեր սեկտորների (իրավապահ, առողջապահական, սոցիալական) պետական մարմինների

արձագանքի արդյունավետությունն ու ազդեցությունը, վեր հանել առավել բարձր արդյունավետություն գրանցող, ապացուցահեն և էթիկական միջամտությունները՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Միաժամանակ, խիստ կարևոր է անձնական տվյալների գաղտնիության ապահովումը, որը պետք է ենթադրի, որ իրավասու մարմինները հասանելիություն ունեն միայն իրենց կողմից լրացված տվյալներին, իսկ ամբողջական պատմությանը հասանելիություն ունի միայն Առողջապահության ազգային ինստիտուտի (կամ օրենքով լիազորված այլ մարմնի) իրավասու աշխատակիցը՝ «մի վնասիր» սկզբունքին համահունչ:

5) բարձրացնել թմրամիջոցների գործածող անձանց և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված իրադարձությունների լուսաբանման առանձնահատկությունների, այս ոլորտում պետության քաղաքականության վերաբերյալ լրագրողների իրազեկվածությունը և խթանել նրանց գործունեության զգայունությունը: Պատշաճ հանրային իրազեկման տեսանկյունից կարևոր է, որ լրագրողներն ունենան համապատասխան գիտելիքներ թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բնույթի և ապօրինի շրջանառության վերաբերյալ: Սա թույլ կտա ապահովել լրատվամիջոցների կողմից այս ոլորտին առնչվող իրադարձություններին զգայուն անդրադարձը՝ զերծ պահելով թմրամիջոցներ գործածող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց լրացուցիչ թիրախավորումից և խարանից: Խտրականության ենթարկվելու վախը հիմնական պատճառներից է, որը կարող է հետ պահել անձին աջակցության դիմելուց՝ ինչպես իր անմիջական շրջապատին, այնպես էլ բժշկական հաստատություններ, այլ կազմակերպություններ և իրավասու պետական մարմիններ: Ըստ այդմ, թմրամիջոցներ գործածող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի հնարավոր կանխումը կամ վերացումը նաև նպատակ ունի ապահովել նրանց առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրացումը: Լրագրողների վերապատրաստումները և պետական քաղաքականության վերաբերյալ նրանց պատշաճ իրազեկումը կնվազեցնեն նրանց կողմից թմրամիջոցներ գործածող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց կարծրատիպացնող, անհանդուրժողականություն հրահրող լրատվական նյութերի մշակման և տարածման ռիսկերը:

6) իրականացնել թմրամիջոցների գործածող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառմանն ուղղված տեղեկատվական արշավ, որի շրջանակներում կմշակվեն թմրամիջոցների գործածման հետ կապված և խտրական վերաբերմունքի կամ անհանդուրժողականության հիմքում ընկած կարծրատիպերն ու նախապաշարմունքները հասցեագրող, հանդուրժողական վերաբերմունք խրախուսող տեքստային նյութեր և տեսանյութեր՝ վերաբերելի միջազգային չափանիշներին համապատասխան: Կարևոր է, որ մշակված նյութերը մինչև տարածումը փորձարկվեն թիրախային լսարանի շրջանում:

3.2. Ռազմավարական ուղղություն 2. Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման և չարաշահման կանխարգելում

30. Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տվյալների համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառված 7772 անձից միայն 7-ն է անչափահաս: Միաժամանակ, թմրամիջոցների գործածման փաստը գերազանցապես անհայտ է մնում ինչպես պետական մարմիններին, այնպես էլ բժշկական հաստատություններին, և անձինք, անգամ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման դեպքում, հաճախ խուսափում են դիմել բուժման: Ըստ այդմ, հաշվառման տվյալները չեն կարող հիմք ընդունվել անչափահասների շրջանում թմրամիջոցների գործածման տարածվածությունն օբյեկտիվորեն գնահատելու համար:

31. Երիտասարդ տարիքում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները հատկապես մտահոգիչ են, քանի որ դրանք, ի թիվս այլնի, կարող են հանգեցնել կրթության և սոցիալական ինտեգրման հետ կապված խնդիրների:

32. Վաղ դեռահասությունը նյարդային զարգացման կարևորագույն շրջանն է, և այս շրջանում կանեփից պատրաստված թմրամիջոցների գործածումը կարող է հանգեցնել թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների, հոգեախտաբանական խնդիրների կամ կենտրոնական նյարդային համակարգի զարգացման խանգարումների առաջացման: Այնուամենայնիվ, Զեկույցի համաձայն՝ ամբողջ աշխարհում 15-16 տարեկան դեռահասների կողմից վերջին տարվա ընթացքում կանեփից պատրաստված թմրամիջոցների գործածման տարածվածությունն ավելի բարձր է, քան մեծահասակների շրջանում (համապատասխանաբար 5.5%՝ 4.5%-ի դիմաց):

33. Մի շարք հանգամանքներ առավել հավանական են դարձնում ինչպես անչափահասների, այնպես էլ մեծահասակների կողմից թմրամիջոցների գործածումը և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորումը՝ ներառելով նրանց ռիսկային խմբերի թվում: Կանխարգելման միջոցառումները պետք է հաշվի առնեն այս հանգամանքները և ուղղված լինեն նաև դրանց մեղմմանը կամ վերացմանը՝ այդպիսով նպաստելով թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների դեպքերի նվազմանը, վաղ հայտնաբերմանը և արձագանքին:

34. Նման հանգամանքների թվում են կենսահոգեւոցիալական հանգամանքները, ինչպիսին են, օրինակ, իմպուլսիվ վարքագծին հակվածությունը, հոգեկան առողջության խնդիրները կամ վարքային փոփոխությունները, ընտանիքի կողմից անտեսումը, ընտանեկան և կենցաղային բռնության դրսևորումները, դպրոցի և համայնքի հետ նվազ կապվածությունը, թմրամիջոցների գործածումը խթանող միջավայրի առկայությունը, ինչպես նաև մարգինալացված կամ անապահով համայնքում մեծանալը:

35. Ըստ այդմ, անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման կանխարգելումը ներառում է ոչ միայն իրազեկման միջոցառումների իրականացում, այլ նաև նրանց բնականոն զարգացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանն ուղղված միջոցների ձեռնարկում: Սա կարող է ներառել նրանց հանգստի, հոգեկան և զգայական բարեկեցության ձևավորմանը, անձնական կարողությունների զարգացմանը, արդյունավետ և հոգատար ծնողավարության, դպրոցների և համայնքների հետ կայուն կապի ձևավորմանն ուղղված միջոցառումներ, որոնք կնվազեցնեն անչափահասների և երիտասարդների կողմից ինչպես թմրամիջոցների գործածման, այնպես էլ այլ ռիսկային վարքագիծ դրսևորելու վտանգը:

36. Այս նպատակով անհրաժեշտ է՝

1) անչափահասների և երիտասարդների շրջանում իրականացնել ֆոկուս-խմբային քննարկումներ, որոնք թույլ կտան պարզել թմրամիջոցների գործածման, այս ոլորտում պետական քաղաքականության վերաբերյալ նրանց գիտելիքների և տեղեկացվածության մակարդակը, վեր հանել անչափահասների և երիտասարդների կողմից թմրամիջոցների գործածման առանձնահատկությունները (այդ թվում՝ կապված գործածման պատճառների, թմրամիջոցների ձեռքբերման հիմնական աղբյուրների հետ և այլն), պետական քաղաքականության վերաբերյալ նրանց կարծիքը, անչափահասների և երիտասարդների կողմից արձանագրված հիմնական խնդիրները և նրանց պատկերացմամբ՝ դրանց

հնարավոր լուծումները: Նման ֆոկուս-խմբային քննարկումների անցկացումը կծառայի որպես որակական տվյալների հավաքագրման արժեքավոր միջոց, քանի որ շատ դեպքերում անչափահասների և երիտասարդների (հատկապես՝ մարզերում, գյուղական բնակավայրերում բնակվող) կարծիքները, կարիքները և խնդիրներն անհայտ են մնում պետական քաղաքականություն մշակողներին, ինչը հանգեցնում է մշակված քաղաքականության բացերի:

2) անցկացնել անչափահասների և երիտասարդների արտաուսումնական զբաղվածության և հանգստի կազմակերպման ծրագրեր: Ինչպես արդեն նշվեց, դպրոցի և համայնքի հետ կապի առկայությունը կարող է նվազեցնել թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման ռիսկերը: Ըստ այդմ, կարևոր է հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողների համար ծրագրերի կազմակերպումը, որոնք կապահովեն նրանց արտաուսումնական զբաղվածությունն ու հանգիստը, կնպաստեն նրանց հետաքրքրությունների, լրացուցիչ հմտությունների և իրենց հասակակիցների հետ կապերի ձևավորմանը:

3) կատարելագործել հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ դասարանների ուսումնական ծրագրերի՝ թմրամիջոցների գործածման և չարաշահման հետևանքների, արձագանքման եղանակների իրազեկմանն ու դրանց կանխարգելմանն առնչվող դասընթացների ուսումնական նյութերը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդվող՝ «Առողջ ապրելակերպ» առարկան ներառում է թմրամիջոցների գործածմանը նվիրված դասաժամեր: Միաժամանակ, անհրաժեշտ է լավարկել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման վնասների ու առողջական և սոցիալական հետևանքների վերաբերյալ «Առողջ ապրելակերպ» առարկայի դասավանդման նյութերը՝ այս թեմային տրամադրելով ավելի երկար ժամանակ, ինչը թույլ կտա ավելի համապարփակ գիտելիք փոխանցել երեխաներին, զարգացնել իրավիճակին արձագանքելու հմտություններն ու կարողությունները: ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ թմրամիջոցների չարաշահման վերաբերյալ առանձին դասընթացները չեն կարող տրամադրել համապարփակ գիտելիքներ և նպաստել անհրաժեշտ անձնական և սոցիալական հմտությունների ու արժեքների ձևավորմանը կամ զարգացմանը: Ուստի, կանխարգելման նպատակով իրականացվող կրթությունը պետք է ներառի նաև

անչափահասների համար կարևորություն ներկայացնող այլ թեմաներ, ինչպիսիք են դեռահասության տարիքում զարգացումը, սթրեսը և դրա հաղթահարումը, միջանձնային հարաբերությունները և այլն:⁴ Ընդ որում, կարևոր է նախ իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան լրամշակված դասագրքերի պիլոտավորում, ինչը թույլ կտա նաև գնահատել մշակված ուսումնական նյութի արդյունավետությունը: Բացի այդ, կարևոր է նաև համապատասխան առարկաները դասավանդող մասնագետների պատշաճ վերապատրաստումը, ինչը կապահովի լրամշակված նյութերի առավել արդյունավետ մատուցմանը:

4) զարգացնել անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման կանխարգելման, գործածման դեպքում աջակցության տրամադրման վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների, տնօրենների և երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների գիտելիքներն ու կարողությունները: Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների կանխարգելման տեսանկյունից կարևոր է նաև վաղ փուլում անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման բացահայտումը: Թեև ուսուցիչները, տնօրենները և երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողները չեն կարող նման բացահայտումների կատարման պարտականություն կրել, սակայն վերջիններիս թմրամիջոցների գործածման վաղ նշանների, ինչպես նաև ուղղորդման և աջակցման մեխանիզմների վերաբերյալ գիտելիքների փոխանցումը կարող է նպաստել համապատասխան կասկածի առկայության դեպքում նրանց պատշաճ արձագանքին:

5) անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) և խնամատար ծնողների (այդ թվում՝ խնամքի կենտրոններում գտնվող երեխաների օրինական ներկայացուցիչների) համար անցկացնել դասընթացներ և այլ

⁴ Հասանելի՝ https://www.unodc.org/pdf/youthnet/handbook_school_english.pdf

իրազեկման միջոցառումներ: Ծնողների հետ անկայուն կամ բացասական հարաբերությունները, անտեսումը, ընտանեկան և կենցաղային բռնության այլ դրսևորումները թմրամիջոցների գործածման և չարաշահման տեսանկյունից ռիսկային հանգամանքներ են: Ըստ այդմ, օրինական ներկայացուցիչները և խնամատար ծնողները զգալի ազդեցություն կարող են ունենալ երեխաների նկատմամբ՝ կապված թմրամիջոցների գործածման և պատասխանատու մոտեցումների ձևավորման հետ: Ուստի, օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար թմրամիջոցների գործածման և ծնողավարության հիմունքների վերաբերյալ դասընթացների իրականացումն առաջնային նշանակություն ունի անչափահասների շրջանում թմրամիջոցների գործածման կանխարգելման տեսանկյունից: Իրազեկման միջոցառումները կարող են տեղեկություն ներառել նաև համացանցի ռիսկային ռեսուրսներ (կայքեր) մուտք գործելն արգելափակող կամ սահմանափակող համապատասխան հավելվածների հնարավորությունների, օգտակարության և դրանցից օգտվելու կարգի, ինչպես նաև անվտանգ կայքերի վերաբերյալ: Իրազեկման միջոցառումներում օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների թիրախային ներառումը կարևոր է՝ նաև նկատի ունենալով, որ համապատասխան գիտելիքների առկայության դեպքում վերջիններս կարող են վաղ փուլերում երեխաների մոտ նկատել թմրամիջոցների գործածման նշանները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ: Բացի այդ, պատշաճ ծնողավարությունը և օրինական ներկայացուցիչների կամ խնամատար ծնողների հետ առողջ հարաբերությունները թմրամիջոցների գործածման կանխարգելման կարևորագույն նախապայմաններից են.

6) թմրամիջոցների գործածման և դրանց հասցրած վնասների վերաբերյալ տպագրել տեղեկատվական թերթիկներ և պաստառներ ու դրանք տարածել անչափահասների և երիտասարդների շրջանում: Նկատի ունենալով, որ երիտասարդների ու անչափահասների կողմից թմրամիջոցների գործածումը և չարաշահումը որոշակի առանձնահատկություններ ունեն (տարիքային, ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական), ինչպես նաև հաշվի առնելով դեռահասների կողմից թմրամիջոցների գործածման հնարավոր հատկապես բացասական հետևանքները նրանց բարեկեցության և զարգացման տեսանկյունից՝ անհրաժեշտ է ընդհանուր բնակչության համար նախատեսված տեղեկատվական արշավներից զատ նաև մշակել առանձին տեղեկատվական նյութեր, որոնցով կներկայացվեն թմրամիջոցների գործածման առողջական և սոցիալ-հոգեբանական հետևանքները, աջակցության և բուժման հասանելի միջոցները: Նման տեղեկատվական նյութերի մշակումը նաև թույլ կտա

տեղեկությունն անչափահասների համար առավել մատչելի կերպով ներկայացնել՝ հաշվի առնելով տարբեր տարիքային խմբերի առանձնահատկությունները.

7) իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում թմրամիջոցների գործածման կամավոր սքրինինգային թեսթավորման մեխանիզմ ներդնելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություն՝ հիմնվելով «Եվրոպական դպրոցների ալկոհոլի և այլ թմրամիջոցների հետազոտության ծրագրի» (ESPAD) և Եվրոպական միության դեղերի գործակալություն (EUDA) ցուցիչների, ինչպես նաև կամավորության և իրազեկված համաձայնության սկզբունքների վրա: Ուսումնասիրությունը պետք է ներառի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ապահովման տեսանկյունից ընդունելի մոդելի քննարկումը: Որպես հնարավոր նախնական մոդել՝ կարող է դիտարկվել անանուն էլեկտրոնային հարթակի ստեղծումը, որտեղ հնարավոր կլինի գրանցվել կամավոր թեսթավորում անցնելու համար և համակարգը պատահականության սկզբունքով գրանցումների թվից կընտրի այն երեխաներին, որոնք պետք է թեսթավորում անցնեն՝ պահպանելով անձնական տվյալների լիարժեք գաղտնիությունը.

8) անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար մշակել թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որոնք կներառեն մատչելի տեղեկություն թմրամիջոցների գործածման հիմնական պատճառների, գործածման նշանների, առողջական և սոցիալական հետևանքների, գործածման կասկածի դեպքում անչափահասների հետ հաղորդակցության առանձնահատկությունների և աջակցման մեխանիզմների վերաբերյալ: Նման տեղեկատվական թերթիկների մշակումը և անչափահասների օրինական ներկայացուցիչների ու խնամատար ծնողների շրջանում դրանց տարածումը թույլ կտան լրացուցիչ իրազեկել օրինական ներկայացուցիչներին և խնամատար ծնողներին թմրամիջոցների գործածման հետևանքների և նրանց նախընտրելի արձագանքի վերաբերյալ՝ չսահմանափակվելով վերապատրաստումներով և տեղեկությունը հասանելի դարձնելով անձանց շատ ավելի լայն շրջանակի.

9) անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար պատրաստել համացանցի ռիսկային ռեսուրսներ (կայքեր) մուտք գործելն արգելափակող կամ սահմանափակող համապատասխան հավելվածների հնարավորությունների, օգտակարության և դրանցից օգտվելու կարգի, ինչպես նաև անվտանգ կայքերի վերաբերյալ

տեղեկատվական տեսահոլովակ: Նման տեսահոլովակի պատրաստումը կնպաստի համացանցում որոշակի վտանգ ներկայացնող ռեսուրսների, ինչպես նաև դրանց արգելափակման կամ հասանելիության սահմանափակման հնարավորությունների վերաբերյալ անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների գիտելիքների և հմտությունների զարգացմանը: Սա, իր հերթին, կնպաստի ծնողների կողմից երեխաների հանգստի և ազատ ժամանակի առավել գիտակցված պլանավորմանը՝ հնարավոր ռիսկերի հաշվառմամբ: Կարևոր է, որ տեսահոլովակը շեշտի, թե որ դեպքերում է, որ անհրաժեշտ է գործարկել արգելափակման կամ սահմանափակման մեխանիզմները, իսկ որ դեպքերում հնարավոր կլինի զերծ մնալ դրանից՝ ապավինելով անչափահասի հետ հաղորդակցությանը և փոխադարձ վստահության միջավայրին:

37. Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման կանխարգելման տեսանկյունից հատկապես կարևոր դերակատարում ունի Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության արդյունավետ գործունեությունը: Համայնքամետ ծառայության ազդեցության ուժեղացումը կպաստի ինչպես այս, այնպես էլ այլ ոլորտներում հանցավորության թվի կրճատմանը: Միաժամանակ, միայն համայնքում, այդ թվում՝ անչափահասների և երիտասարդների շրջանում վստահության վրա հիմնված հարաբերությունների ձևավորման միջոցով է, որ հնարավոր կլինի համայնքային ոստիկանի կողմից թմրամիջոցների գործածման կանխարգելումը կամ պատշաճ ուղղորդումը:

38. Ըստ այդմ, Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագրով ամրագրվում է համայնքային ոստիկանության գործող մոդելի վերանայման տեսլականը և նախատեսվում են համայնքային ոստիկանության գործառույթների կատարելագործմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ թմրամիջոցների գործածման և ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտին առնչվող:

3.3. Ռազմավարական ուղղություն 3. Դատապարտյալների և ազատությունից զրկված այլ անձանց շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելում

39. Ազատությունից զրկված անձինք, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալները, որպես կանոն, ավելի խոցելի են

թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման տեսանկյունից՝ ի համեմատություն մնացած բնակչության: Թմրամիջոցներ գործածող, քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց թվում են ինչպես թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցանքների կամ թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ազդեցության հետևանքով ոչ սթափ վիճակում հանցանքի կատարման համար դատապարտված անձինք, այնպես էլ այլ հանցանքների կատարման համար դատապարտվածները, որոնք թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ են ձեռք բերել մինչև քրեակատարողական հիմնարկում պահվելը կամ այդ ընթացքում:

40. Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական օրենսգրքի 40-րդ գլխով նախատեսված հանցագործությունների (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ) համար 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պատիժ է կրել 144 դատապարտյալ, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 192 դատապարտյալ, 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ՝ 239 դատապարտյալ:

41. 2023 թվականի ընթացքում Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է թմրանյութերի և հոգեմետ նյութերի ներթափանցման փորձի 34 դեպք, իսկ 2024 թվականի առաջին կիսամյակում՝ 30 դեպք: Առավել հաճախ հայտնաբերվել են հետևյալ թմրատեսակները՝ մարիխուանա (2022 թվականին՝ 460,801գ, 2023 թվականին՝ 283,954գ, 2024 թվականի 1-ին կիսամյակին՝ 62,42գ), հերոին (2022 թվականին՝ 59,624գ, 2023 թվականին՝ 56,876գ, 2024 թվականի 1-ին կիսամյակին՝ 9,04գ), մեթամֆետամին (2022 թվականին՝ 16,478գ, 2023 թվականին՝ 15,894գ, 2024 թվականի 1-ին կիսամյակին՝ 8,013գ), հաշիշ (2022 թվականին՝ 14,966գ, 2023 թվականին՝ 44,95գ, 2024 թվականի 1-ին կիսամյակին՝ 19,22գ), տետրահիդրոկան նաբինոլ (2022 թվականին՝ 15,6671գ, 2023 թվականին՝ 10,29գ, 2024 թվականի 1-ին կիսամյակին՝ 44,12գ) և ափիոն (2022 թվականին՝ 5,2134գ, 2023 թվականին՝ 0,29գ)⁵: Հիմնարկներում թմրանյութերի և հոգեմետ նյութերի հայտնաբերման հիմնական եղանակներ են հանդիսացել

⁵ Ներկայացված թվերը հիմնված են դատանյութագիտական կամ թմրաբանական համապատասխան փորձաքննությունների արդյունքների վրա՝ գտաքաշերով: 2024 թվականի կիսամյակային տվյալներն ամբողջական չեն, քանի որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից դեռևս չեն ստացվել բոլոր փորձաքննության փուլում գտնվող՝ թմրանյութերի և հոգեմետ նյութերի վերաբերյալ գտաքաշերով համապատասխան եզրակացությունները:

կացարանների խցերի նախատեսված և չնախատեսված խուզարկությունները, անձնական խուզարկությունները, այդ թվում նաև՝ քրեակատարողական հիմնարկներ այցելած անձանց կողմից փոխանցվող հանձնուքների խուզարկությունները, ինչպես նաև թմրամիջոցների հայտնաբերումը քաղաքացիների մոտ՝ տեսակցության ընթացքում:

42. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների առկայության դեպքում դատապարտյալի պատշաճ վերասոցիալականացման ապահովման համար անհրաժեշտ է հասցեագրել այդ խանգարումները և տրամադրել շարունակական բուժում ու կայուն վերականգնման աջակցություն: Ըստ այդմ, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից թմրամիջոցների գործածման կանխարգելումը, ապացուցահեն բուժումը, գերդոզավորման կանխարգելումը և սոցիալական աջակցության տրամադրումը առաջնային նշանակություն ունեն ինչպես քրեական արդարադատության համակարգի արդյունավետության, այնպես էլ կայուն համայնքային զարգացման տեսանկյունից: Նույնը վերաբերում է նաև թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող՝ պրոբացիայի շահառուներին:

43. Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

1) բարելավել քրեակատարողական հիմնարկների, կալանավորվածներին պահելու վայրերի և ձերբակալվածներին պահելու վայրերի՝ թմրամիջոցների հայտնաբերման տեխնիկական հագեցվածությունը՝ վեր հանելով յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի, կալանավորվածներին պահելու վայրի և ձերբակալվածներին պահելու վայրի կարիքները և դրա հիման վրա ձեռք բերելով անհրաժեշտ սարքավորումներ: Թմրամիջոցների գործածման տեսանկյունից խոցելիությունն առավելապես վերաբերում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց և կալանավորներին, և երկարատև վերականգնողական աշխատանքներ հնարավոր է տանել հենց նրանց հետ: Ձերբակալման կարճաժամկետ բնույթը հնարավորություն չի տալիս իրականացնելու նման աշխատանքներ: Այնուամենայնիվ, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տեսանկյունից կարևոր է ազատությունից զրկված բոլոր անձանց պահման վայրերում պատշաճ հսկողության իրականացումը, ուստի սույն գործողության շրջանակն ավելի լայն կերպով է նախատեսվել՝ ներառելով նաև ձերբակալվածներին պահելու վայրերը: Այս գործողության կատարմամբ հնարավոր կլինի ապահովել ազատությունից զրկված անձանց պահման վայրեր թմրամիջոցների ապօրինի

ներմուծման փորձերի առավել արդյունավետ բացահայտումը և այդպիսով՝ կանխել նման դեպքերը.

2) նախատեսել քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համար որոշակի պարբերականությամբ թմրամիջոցների գործածման թեստավորում կամ փորձաքննություն անցնելու պարտականություն: Նման պարտականությունը թույլ կտա առավել արդյունավետ կերպով հետևել նշված անձանց վերականգման և բուժման ընթացքին: Միաժամանակ, նախատեսվում է, որ թեստավորումների կատարման արդյունքները կարող են օգտագործվել դատապարտյալների հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների գնահատման գործընթացում.

3) ուսումնասիրել դատավճռով թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցանքների, ինչպես նաև թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում հանցանք կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ բուժման և սոցիալական վերականգնման ծառայություններ ստանալու պարտականություն ենթադրող անվտանգության միջոց կիրառելու ինստիտուտի նախատեսման անհրաժեշտությունը: Նախատեսվում է, որ ուսումնասիրությունը կներառի միջազգային չափանիշների և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների վերաբերելի լավագույն փորձի, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգին առնչվող՝ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց բուժմանը վերաբերելի միջազգային իրավական հիմնարար սկզբունքների վերլուծությունը, ինչի հիման վրա կներկայացվեն համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտության կամ դրա բացակայության վերաբերյալ առաջարկություններ.

4) ազատությունից զրկված անձանց շրջանում իրականացնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում և այս նպատակով իրականացնել դասավանդողների պատրաստում: Այլ դատապարտյալների կողմից թմրամիջոցների գործածման հետևանքների, աջակցության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը կարող է առավել ընդունելի լինել դատապարտյալների համար, քան եթե նույն տեղեկությունը մատուցվի համապատասխան ոլորտի մասնագետի կամ առավել ևս՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Այս դեպքում առավել հավանական է, որ դատապարտյալները ուսուցանողի հետ վստահության վրա հիմնված կապ կկարողանան ձևավորել և առավել մեծ հետաքրքրությամբ կլսեն մատուցվող նյութը: Հարկ է նկատել, որ «Հավասարը՝ հավասարին»

մեթոդով ուսուցում կարող են իրականացնել միայն այն դատապարտյալները, որոնք ունեն թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները հաղթահարելու դրական փորձ.

5) նկատի ունենալով, որ ազատազրկման ձևով պատիժ կրող և կալանավորված անձինք իրավունք ունեն ազատությունից զրկման վայրում շարունակելու հանրակրթական ուսուցումը՝ անհրաժեշտ է նրանց համար նախատեսված հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանում ևս ներառել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների վերաբերյալ դասաժամեր: Ուսումնական նյութերը և համապատասխան ծրագիրը պետք է մշակվեն՝ հիմք ընդունելով ընդհանուր հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդվող՝ «Առողջ ապրելակերպ» առարկայի լրամշակված դասագրքերը.

6) բացի այդ, անհրաժեշտ է նաև առողջ ապրելակերպին վերաբերելի դասաժամեր ներառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դատապարտյալների վերականգնողական արդարադատության կայացման համալիր ոչ ֆորմալ կրթական ծրագրերում, որոնք, ի թիվս այլնի, կանդիդատների նաև թմրամիջոցների ոչ բժշկական գործածման առողջական և սոցիալական հետևանքներին, ազատությունից զրկված անձանց դեպքում առկա առանձնահատկություններին, ինչպես նաև աջակցության և սոցիալական վերականգնման մեխանիզմներին:

3.4. Ռազմավարական ուղղություն 4. Զինծառայողների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելում

44. Զինծառայողները, հատկապես հետկոնֆլիկտային ժամանակաշրջանում, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների տեսանկյունից ռիսկային խմբերի թվում են:⁶ Զինվորական ծառայության անցնելը կապված է ծխելու, ալկոհոլի չարաշահման, թմրամիջոցների գործածման և այլ ռիսկային վարքագծի հետ:⁷

45. ԱՄՆ թմրամիջոցների չարաշահման ազգային ինստիտուտի համաձայն՝ ծառայության մեջ գտնվելու սթրեսը և զինծառայության յուրահատուկ մշակույթը

⁶ Տես Թմրամիջոցների գործածման կանխարգելման միջազգային չափանիշներ, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ, 2018, էջ 38, հասանելի՝ https://www.unodc.org/documents/prevention/UNODC-WHO_2018_prevention_standards_E.pdf

⁷ <https://nida.nih.gov/publications/drugfacts/substance-use-military-life#ref>

միաժամանակ ներառում են զինծառայողների կողմից թմրամիջոցների գործածման ռիսկեր և պաշտպանիչ գործոններ: Այսպես, զինվորական ծառայության մշակույթը շատ դեպքերում ենթադրում է այնպիսի գաղափարների, արժեքների և համոզմունքների ձևավորում, որոնք խոչընդոտում են զինծառայողների կողմից օգնության դիմելը: Հոգեբանական օգնության դիմելը զինծառայողների կողմից երբեմն կարող է դիտվել որպես թուլության նշան, բացի այդ, պայմանագրային զինվորական ծառայողները կարող են նաև վախենալ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բացահայտման դեպքում աշխատանքի կորստից: Միաժամանակ, զինծառայության առանձնահատկությունները, ուղղահայաց ենթակայական համակարգի և բարձր հաշվետվողականության պահանջների առկայությունը կարող են նաև նպաստել թմրամիջոցների գործածման դեպքերի բացահայտմանը, ինչը կանխարգելիչ բնույթ ունի:⁸

46. Պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ 2022 թվականին Հայաստանի Հանրապետության զինված ուժերում գրանցվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 139 դեպք, որոնցում ներգրավված են եղել 133 ժամկետային զինծառայող, 28 պայմանագրային զինծառայող և 2 սպա, 2023 թվականին՝ 159 դեպք, որոնցում ներգրավված են եղել 156 ժամկետային զինծառայող, 32 պայմանագրային զինծառայող և 10 սպա, իսկ 2024 թվականի առաջին կիսամյակին՝ 107 դեպք, որոնցում ներգրավված են եղել 107 ժամկետային զինծառայող, 53 պայմանագրային զինծառայող և 12 սպա:

47. Զինված ուժերում թմրամիջոցների գործածման կանխարգելումն առաջնային նշանակություն ունի զինված ուժերում կարգապահության և բարոյահոգեբանական ապահովման տեսանկյունից: Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

1) զինծառայողների ուսումնական ծրագրերում, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններում, ներառել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների վերաբերյալ թեմաներ և իրականացնել այս թեմայով պարբերական վերապատրաստումներ: Ինչպես արդեն նշվեց, թմրամիջոցների գործածման հետևանքների վերաբերյալ պատշաճ իրազեկվածությունն ունի կանխարգելիչ նշանակություն: Բացի այդ, նման գիտելիքների փոխանցումը նաև նպաստում է առավել գիտակցված որոշումների կայացմանը: Ավելին, դասընթացները գիտելիքներ կփոխանցեն նաև բուժման և աջակցման մեխանիզմների վերաբերյալ:

⁸ Տես «Ռազմական տեղակայումներ և հոգեներգործուն նյութերի գործածում: Վերանայում և ապագա ուղղություններ», Մ.Ջ. Լարսոն, Ն.Ռ.Վուտեն, Ռ.Ս. Ադամս, Է.Լ. Մերրիկ, 2012, հասանելի՝ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3321386/>

2) ուսումնասիրել և ներդնել գինձառայողների կողմից թմրամիջոցներ ձեռք բերելու, դրանք զորամասեր ներմուծելու և ապօրինի գործածելու հնարավոր դեպքերի կանխարգելման դրական արդյունքներ արձանագրած երկրների փորձը: Զինվորական ծառայության բնույթը և զինված ուժերում առկա առանձնահատուկ մշակույթը պահանջում են զինված ուժերում թմրամիջոցների գործածման կանխարգելման հատուկ, տարբերվող մեթոդաբանություն՝ ի համեմատություն բնակչության այլ խմբերի: Ըստ այդմ, կարևոր է նման մեթոդաբանության վրա հիմնված գործողությունների ծրագրի մշակումը, որը պետք է նաև հիմնվի այս ոլորտում որոշակի հաջողություններ գրանցած պետությունների վերաբերելի փորձի վրա:

3) վերանայել գինձառայողների կողմից թմրամիջոցներ ձեռք բերելու, դրանք զորամասեր ներմուծելու և ապօրինի օգտագործելու հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով իրականացվող օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների մեթոդաբանությունը և դրա հիման վրա պարբերաբար իրականացնել ծրագրային և արտապլանային միջոցառումներ:

4) սահմանել ռազմաուսումնական հաստատություններ ընդունվողների, նորակոչիկների և գինձառայողների կողմից թմրամիջոցների գործածումը կանխարգելելու մեխանիզմներ՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Թմրամիջոցների գործածման կանխարգելման միջազգային չափանիշներին» համապատասխան:⁹ Նման մեխանիզմները կարող են ներառել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման պարբերական ստուգումներ անցնելու հնարավորություն կամ պարտականություն, առողջապահական ծառայություններին ուղղորդում, թմրամիջոցների գործածման վտանգների վերաբերյալ տեղեկության հաղորդում և այլն: Նման գործիքակազմի ներդրումը հնարավորություն կտա առավել համակարգված կերպով բացահայտել զինված ուժերում թմրամիջոցների գործածման դեպքերը և ժամանակին արձագանքել դրանց: Այն նաև կանխարգելիչ նշանակություն կունենա այն գինձառայողների դեպքում, որոնք դեռևս թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ չունեն:

⁹ Հասանելի՝ https://www.unodc.org/documents/prevention/UNODC-WHO_2018_prevention_standards_E.pdf

3.5. Ռազմավարական ուղղություն 5. Թմրամիջոցների օրինական շրջանառությանը վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործում, ապօրինի թմրամիջոց գործածող անձանց համար սահմանափակումների նախատեսում

48. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և գործածման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքով: Օրենքի կարգավորումներին համապատասխան՝ ենթաօրենսդրական ակտերով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը), շրջանառության կանոնները, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, պրեկուրսորների զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը և այլն:

49. Ընդունված լինելով դեռևս 2002 թվականի դեկտեմբերի 26-ին՝ նշված օրենքը կարիք ունի վերանայման՝ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող չափանիշներին, համապատասխանության տեսանկյունից: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող՝ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով արդեն իսկ նախատեսվել է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ օրենսդրության բարելավումը (գործողություն 5.12): Նշված գործողության կատարումը ենթադրում է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական օգնությունը և սպասարկումը կարգավորող առանձին օրենքի ընդունում, որով կնախատեսվեն նրանց բժշկական իրավունքները:

50. Այնուամենայնիվ, թմրամիջոց գործածող անձանց առողջության պահպանման իրավունքին առնչվող իրավակարգավորումներից զատ՝ թմրամիջոցների գործածմանը և օրինական շրջանառությանն առնչվող օրենսդրությունը դեռևս ունի լավարկման կարիք:

51. Մասնավորապես, անհրաժեշտ է՝

1) իրականացնել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածումը և օրինական շրջանառությունը կանոնակարգող օրենսդրության վերլուծություն՝ գնահատելով դրա համապատասխանությունը ՄԱԿ-ի կոնվենցիաներին և այլ միջազգային փաստաթղթերին, ինչպես նաև շրջանառության արդի միտումներին, այդ թվում՝ կապված բժշկական նպատակներով թմրամիջոցների օրինական շրջանառության հետ: Գնահատման հիման վրա հնարավոր կլինի վեր հանել գործող օրենսդրության բացերն ու խնդրային կարգավորումները, ինչի հիման վրա կմշակվի օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը:

2) ՄԱԿ-ի թմրամիջոցների միջազգային վերահսկման գրասենյակի կողմից տրամադրված ցանկի հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ի հայտ եկած նոր թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, դրանց պրեկուրսորները, պատրաստուկները, համարժեք նյութերը (անալոգները) և ածանցյալներն ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա նյութերի ցանկում, ինչպես նաև կատարել դրանց չափերի փոփոխություն: Թմրամիջոցների արտադրման շուկան շարունակաբար զարգանում է և ի հայտ են գալիս նորանոր թմրատեսակներ (այդ թվում՝ սինթետիկ), դրանց պրեկուրսորներ և ածանցյալներ: Ըստ այդմ, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու տեսանկյունից կարևոր է գործնական փոփոխությունների արտացոլումն օրենսդրական ակտերում, որոնցով սահմանվում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ցանկերն ու չափերը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1129-Ն և 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշումներ):

3) նկատի ունենալով թմրամիջոցների կայուն գործածման հնարավոր ազդեցությունը անձի կոգնիտիվ կարողությունների վրա, ներառյալ՝ անգամ մեկանգամյա գործածման արդյունքում ոչ սթափ վիճակի առաջացումը՝ կարևոր է նաև դիտարկել սթափություն ենթադրող, հանրային առողջության ու հասարակական անվտանգության տեսանկյունից ռիսկեր պարունակող գործունեության թույլատրման համար թմրամիջոցների գործածման բացասական թեստի առկայությունը որպես պարտադիր պայման նախատեսելու հնարավորությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է ուսումնասիրել «D» կարգի և «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցների վարորդների համար պարտադիր պարբերական թեստավորում անցնելու պարտականություն նախատեսելու հնարավորությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով վերաբերելի միջազգային փորձը, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձանց վարորդական իրավունքի վկայականի ստացումը թույլատրելու հնարավորությունը: Նշված ուսումնասիրությունները պետք է հիմնվեն միջազգային լավագույն փորձի և չափանիշների վրա, այդ թվում՝ դիտարկեն նման պահանջներ նախատեսելու իրավաչափությունը ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից:

4. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ, ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ՀԱՄԱՐԺԵՔ ՆՅՈՒԹԵՐԻ (ԱՆԱԼՈԳՆԵՐԻ) ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

52. Ինչպես արդեն նշվեց, վերջին տարիներին արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթների և թմրամիջոցների հետ կապված հանցագործության դեպքերի կայուն աճ: Մասնավորապես, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը 2023 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 171.8%-ով՝ կազմելով 2802՝ նախորդ տարվա 1031-ի դիմաց:

53. Աճել է նաև այն քրեական վարույթների թիվը, որոնց շրջանակներում մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկվել է դատարան: Ըստ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2018 թվականին՝ 485, 2019 թվականին՝ 510, 2020 թվականին՝ 490, 2021 թվականին՝ 595 և 2022 թվականին՝ 754 անձանց վերաբերյալ գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

54. Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է 16,4%՝ նախորդ տարվա 17,5%-ի դիմաց: Նույն ժամանակահատվածում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է 9,9%՝ նախորդ տարվա 10,5%-ի դիմաց:

55. Բացահայտված դեպքերի վերլուծությունը փաստում է, որ ձերբակալվածներից նախաքննության ընթացքում հնարավոր չի լինում ստանալ ամբողջական տեղեկություններ, քանի որ շատ հաճախ նրանք չեն տիրապետում գործի մանրամասներին, այլ ընդամենը

գործիք են հանդիսանում հանցագործության իրական կազմակերպիչների համար: Արդյունքում հանցագործության իրական պատվիրատուներն ու հասցեատերերը մնում են անպատիժ՝ շարունակելով իրենց գործունեությունը: Վերջիններիս բացահայտելը առանձնակի դժվար է դառնում՝ ելնելով այն հանգամանքից, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ամբողջ գործընթացն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այսպես, նամակագրությունն իրականացվում է հաղորդակցության համար նախատեսված՝ Telegram, WhatsApp և այլ հավելվածներով, իսկ ֆինանսական գործարքների համար օգտագործվում են EasyPay, Webmoney, Яндекс.деньги և այլ վճարային համակարգեր:

56. Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության մասին 2023 թվականի տարեկան հաղորդման համաձայն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական վարույթների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հետզհետե ավելի մեծ տարածում է ստանում իրացվող թմրամիջոցի դիմաց վճարումները թվային արժույթի միջոցով ընդունելու գործելաոճը: Նման դեպքերում թմրամիջոց իրացնող կամ այն ձեռք բերող անձինք օգտվում են կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող անձանց ծառայություններից: Ընդ որում, վերջիններս, առանձին դեպքերում տեղեկացված լինելով իրենց միջոցով շրջանառված միջոցների հանցավոր ծագման մասին, անմիջական մասնակցություն են ունենում հիշյալ գույքի օրինականացմանը:

57. Նկատի ունենալով համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, մասնավորապես՝ իրացման դեպքերի զգալի աճի տեմպերը՝ 2022 թվականին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության կազմում ստեղծվեց համացանցի միջոցով թմրանյութերի ապօրինի շրջանառության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի նոր մասնագիտացված ստորաբաժանում:

58. Այնուամենայնիվ, հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և կրիպտոարժույթի լայնորեն տարածված օգտագործմամբ պայմանավորված՝ իրավապահ մարմինների առջև շարունակաբար ծառացող նոր մարտահրավերները՝ անհրաժեշտ է ձեռնարկել իրավապահ մարմինների արձագանքի, օպերատիվ-հետախուզական միջոցառումների և նախաքննության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված այլ միջոցներ:

59. Զեկույցի համաձայն՝ նկատի ունենալով նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության փոխկապակցվածությունն այլ հանցավոր գործունեության հետ, անհրաժեշտ է ձեռնարկել այս ոլորտում հանցավորության դեմ համապարփակ պայքարին ուղղված միջոցներ, որոնք նպատակ կունենան, ի թիվս այլնի՝

1) ազդել թմրամիջոցների շուկայի, այլ ապօրինի տնտեսական գործունեության և դրանց փոխարինելիության վրա.

2) հասկանալ և հասցեագրել հանցավոր կազմակերպությունների ձևավորումը, ինչպես նաև դրանցում անձանց (հատկապես երիտասարդների) ներգրավումն ու անդրսահմանային կապերի ձևավորումը.

3) տրամադրել սոցիալ-տնտեսական այլընտրանքներ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ավելի ցածր մակարդակներում ներգրավված անհատներին, ինչպիսիք են գյուղատնտեսությամբ զբաղվողները և անձինք, ովքեր ներգրավվում են թմրամիջոցներ ապօրինի շրջանառության մեջ՝ ելնելով աղքատությունից.

4) կատարել իրավապահ մարմինների և քրեական արդարադատության համակարգի ռեսուրսների ռազմավարական պլանավորում և վերաբաշխում այն դեպքերում, երբ այդ ռեսուրսներն անհամաչափ կերպով ուղղվում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված ավելի ցածր մակարդակի դերակատարներին. նման դեպքերում, ի թիվս այլնի, անհրաժեշտ է կատարելագործել միջազգային համագործակցությունը, զարգացնել իրավապահ մարմինների աշխատակիցների կարողությունները և այլն.

5) ապահովել, որ իրավապահ մարմինների աշխատակիցներն ունենան բավարար տեխնիկական հմտություններ և ռեսուրսներ՝ արձագանքելու թմրամիջոցների ապօրինի շրջանառության նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների գործածմանը.

6) գնահատել բռնագրավումների և իրավապահ մարմինների այլ գործունեության ազդեցությունն ու ծախսարդյունավետությունը՝ ապահովելու համար, որ դրանք թիրախավորեն այն առաքանիներն ու ուղիները, որոնք առավել արդյունավետ կերպով հանգեցնում են թմրամիջոցների մատակարարման էական խափանմանը:

4.1. Ռազմավարական ուղղություն 6. Մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի ներկրման կանխարգելում

60. Հայաստանի աշխարհագրական դիրքը կարող է գրավիչ լինել անդրազգային հանցավոր խմբավորումների համար՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պրեկուրսորներ, պատրաստուկներ, համարժեք նյութեր (անալոգներ) և ածանցյալներ դեպի այլ պետություններ տեղափոխելու նպատակով հանրապետության տարածքը որպես տարանցիկ ուղի օգտագործելու տեսանկյունից: Ուստի, կարևոր է մաքսային ծառայության կարողությունների շարունակական կատարելագործումը՝ մաքսանենգության հնարավոր դեպքերին պատշաճ արձագանքն ապահովելու ու նման դեպքերը կանխելու համար:

61. Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

1) բարելավել պետական սահմանի անցման կետերում մաքսային ծառայության տեխնիկական հագեցվածությունը՝ պետական սահմանի անցման յուրաքանչյուր կետի կարիքների գնահատման հիման վրա: Նոր սարքավորումների ձեռք բերումն ուղղված է ինչպես թմրամիջոցների առավել ճշգրիտ հայտնաբերմանը, այնպես էլ երաշխավորելուն, որ կասկածելի նյութերի հայտնաբերման դեպքում մաքսային ծառայողներն ունենան անհրաժեշտ տեխնիկական միջոցները՝ պարզելու՝ արդյոք հայտնաբերված նյութը թմրամիջոց է, թե արտաքին հատկանիշներով դրան նմանվող որևէ այլ նյութ:

2) իրականացնել մաքսային ծառայողների կարողությունների զարգացում՝ կապված թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտման, ներառյալ՝ արտերկրից փոստային առաքանիների և սուրհանդակային կապի միջոցով փոխադրվող բեռների հսկողության հետ: Վերապատրաստումների իրականացումը նպատակ ունի մաքսային ծառայողներին փոխանցելու համապարփակ գիտելիքներ թմրամիջոցների, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող հիմնական թմրատեսակների, դրանց արտաքին տեսքի, այլ նման նյութերից տարանջատման կանոնների, մաքսանենգության բացահայտման հետ կապված այլ առանձնահատկությունների վերաբերյալ: Կարևոր է, որ վերապատրաստման նյութերը նաև ներառեն գենդերազգայուն հաղորդակցության, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայի դերակատարների՝ գենդերով պայմանավորված առանձնահատկությունների թեմաները:

3) ուսումնասիրել փոստային կապի օպերատորների կողմից փոստային առաքման վերաբերյալ օրենսդրությունը՝ ներկայացնելով փոստային առաքման շրջանակներում թմրամիջոցների առաքումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ:

4) կատարելագործել միջազգային հանցավոր խմբավորումների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի օգտագործմամբ թմրամիջոցների տարանցման ուղիների մշտադիտարկումը: Նշված գործողության կատարումը ենթադրում է ներկայումս իրականացվող մշտադիտարկման արդյունավետության գնահատում և առկա թերությունների բացահայտում, որի հիման վրա կմշակվի մշտադիտարկման մեթոդների և կառուցակարգերի վերաբերյալ ուղեցույցը:

5) ուսումնասիրել թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարի ընթացքում ծագած հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմները: Ուսումնասիրությունը պետք է համապարփակ կերպով ամփոփի նշված ոլորտում առկա խնդիրներն ու ներկայացնի դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկություններ, որի հիման վրա կմշակվեն համապատասխան գործողություններ՝ Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2028-2030 թվականների ռազմավարությունում ներառելու նպատակով:

4.2. Ռազմավարական ուղղություն 7. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության առնչությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության և նախաքննության արդյունավետության բարձրացում

62. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճը և հանցավոր կազմակերպությունների կողմից կիրառվող նոր գործիքակազմը պահանջում են իրավապահ մարմինների արձագանքման մեթոդաբանության կատարելագործում և դրանց աշխատակիցների կարողությունների զարգացում: Ընդ որում, առանցքային նշանակություն ունեն ապօրինի շրջանառության առաջնային շղթաների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածք թմրամիջոցների ներմուծման և Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների արտադրության դեպքերի բացահայտմանը իրավապահ մարմինների ջանքերի ուղղումը և հենց այս ուղղություններով իրավապահ մարմինների աշխատողների կարողությունների զարգացումը: Ապօրինի շրջանառության այլ՝ առավել մանր, դրսևորումների հասցեագրումը առավելապես հնարավոր է նաև համայնքային ոստիկանության և պարեկային ծառայության ամենօրյա ջանքերի շնորհիվ:

63. Վերջին տարիներին ինչպես ամբողջ տարածաշրջանում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում նկատվել է սինթետիկ թմրամիջոցների շրջանառության

ծավալի զգալի աճ: Հայաստանի Հանրապետությունը 2023 թվականին միացել է Սինթետիկ թմրամիջոցների սպառնալիքներին ուղղված համաշխարհային կոալիցիային՝ նպատակ ունենալով ակտիվացնել այս ոլորտում միջազգային համագործակցությունը:

64. Սինթետիկ թմրամիջոցների մշակման բնույթը լրացուցիչ դժվարությունն է առաջ բերում դրանց շրջանառության վերահսկման տեսանկյունից՝ ի համեմատություն բուսական ծագման թմրամիջոցների: Այսպես, սինթետիկ թմրամիջոցների արտադրությունը համապատասխան պրեկուրսորների առկայության դեպքում հաճախ շատ ավելի արագ և էժան է: Հարկ է նկատել սակայն, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն սինթետիկ թմրամիջոցների արտադրության դեպքեր, դրանք միայն ներկրվում են այլ պետություններից:

65. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն իրավապահ համակարգի արձագանքի համապարփակ մեթոդաբանական փոփոխությունների կատարումը ենթադրում է դրա մանրամասն և համընդգրկուն ուսումնասիրություն, արդյունավետության գնահատում ու խնդիրների վերհանում: Մասնավորապես, անհրաժեշտ է՝

1) ուսումնասիրել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների, այդ թվում՝ սինթետիկ թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետությունը, այդ թվում՝ կապված քրեակատարողական հիմնարկներ այդ նյութերի ապօրինի ներթափանցման ուղիների բացահայտման հետ՝ հիմնվելով նաև այս ոլորտում առկա միջազգային չափանիշների և այլ պետությունների վերաբերելի լավագույն փորձի վրա: Նախատեսվում է, որ ուսումնասիրության արդյունքներով կմշակվեն այս ոլորտում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացման գործողություններ, որոնք կներառվեն Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2028-2030 թվականների ռազմավարությունում:

2) մշակել անչափահասներին և երիտասարդներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավող անձանց հայտնաբերման մեթոդաբանություն, որը կներառվի քրեական ոստիկանների վերապատրաստման դասընթացների ծրագրերում:

3) բարձրացնել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության արդյունավետությունը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի քննության շրջանակներում առանձնակի դժվարություն է ներկայացնում ապօրինի շրջանառության շղթայի ավելի բարձր մակարդակներում գտնվող անձանց և հանցավոր կազմակերպությունների բացահայտումը, և նախաքննությունը գլխավորապես ավարտվում է միայն ավելի ցածր մակարդակի դերակատարների բացահայտմամբ, ինչն ընդհանուր առմամբ նվազ ազդեցություն և արդյունավետություն ունի հետագա ապօրինի շրջանառության կանխարգելման և խափանման տեսանկյունից: Ըստ այդմ, կարևոր է ուսումնասիրել այս տեսանկյունից առավել արդյունավետ քննություն իրականացնելու հնարավոր մեխանիզմներն ու քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, որոնց հիման վրա կմշակվի գործնական ուղեցույց: Բացի այդ, նկատի ունենալով, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր կազմակերպությունները հաճախ ներգրավված են նաև այլ հանցավոր գործունեության մեջ, կարևոր է նշված վարույթների շրջանակներում փողերի լվացման հանցակազմի առկայության դիտարկումը.

4) մշակել մեթոդական ուղեցույց՝ ուղղված որոշակի առանձնահատկությունների հաշվառմամբ (օրինակ՝ էլեկտրաէներգիայի չհիմնավորված բարձր ծախս) շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի աճեցմամբ զբաղվող լաբորատորիաների հայտնաբերմանը.

5) իրականացնել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների հոսքն օրինական շրջանառությունից դեպի ապօրինի շրջանառություն կանխարգելելու միջոցների վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքներով մշակված զեկույցը կներառի այս ոլորտում պետական քաղաքականության լավարկման վերաբերյալ հստակ առաջարկություններ.

6) ուսումնասիրել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի վերաբերյալ գաղտնիության պահպանմամբ ահազանգման մեխանիզմներ ստեղծելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Նման մեխանիզմների ստեղծումը հնարավորություն կընձեռի թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ տեղեկություն ունեցող կամ շրջանառության մեջ ներգրավված կամ շրջանառություն իրականացնող հանցավոր կազմակերպության հետ որևէ այլ կերպ փոխկապակցված անձանց ահազանգել այս դեպքերի մասին՝ առանց սեփական անվտանգության վերաբերյալ մտահոգությունների.

7) սահմանել ապօրինի շրջանառության բացահայտման առաջնահերթության տեսանկյունից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի դասակարգում: Նման դասակարգումը պետք է հիմնվի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վտանգավորության, Հայաստանի Հանրապետությունում դրանց գործածման տարածվածության և այլ չափանիշների վրա: Դասակարգումը նպատակ ունի ուղղորդելու այս ոլորտում իրավապահ մարմինների աշխատանքը՝ այն դարձնելով առավել թիրախային:

4.3. Ռազմավարական ուղղություն 8. Համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելում

66. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների և կրիպտոարժույթի կիրառումը հատկապես մեծ մարտահրավերներ է առաջ բերում իրավապահ մարմինների առջև, որոնք պետք է կարողանան ադապտացվել անդրսահմանային հանցավորության զարգացումներին: Միաժամանակ, նշված միջոցները հատկապես լայնորեն օգտագործվում են սինթետիկ ծագման թմրամիջոցների ապօրինի շրջանառության շրջանակներում:

67. Վերոգրյալը նկատի ունենալով և հաշվի առնելով նման դեպքերի տարածվածությունն ու հետագա աճի տենդենցները՝ անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ներառյալ՝ քրեական օրենսգրքի կարգավորումների վերանայման անհրաժեշտությունը: Մասնավորապես, օրինակ, կարող է դիտարկվել թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը որպես առավել ծանր պատիժ ենթադրող որակյալ հանցակազմի հատկանիշ նախատեսելու հնարավորությունը: Բացի այդ, գործող օրենսդրությունը պետք է ուսումնասիրվի նաև այն տեսանկյունից, թե արդյոք այն որևէ կերպ խոչընդոտում է նշված դեպքերի բացահայտմանը, կամ արդյոք կարող է նախատեսվել լրացուցիչ օրենսդրական գործիքակազմ, որը կբարձրացնի նշված դեպքերի բացահայտման արդյունավետությունը:

68. Միաժամանակ, ապահովելու համար համացանցում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդելու համար իրավապահ համակարգի աշխատակիցների պատշաճ տեխնիկական գիտելիքների և կարողությունների առկայությունը, ինչպես նաև համապատասխան նյութական հագեցվածությունը, անհրաժեշտ է իրականացնել նշված ասպեկտների գնահատում: Կարիքների գնահատման արդյունքներով հնարավոր կլինի

ինչպես վերազինել իրավապահ մարմինների իրավասու ստորաբաժանումները, այնպես էլ իրականացնել համապատասխան տեխնիկական միջոցների և ծրագրային համակարգերի կիրառման վերաբերյալ այդ ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստումներ: Մասնավորապես, առաջարկվում է կարիքների գնահատման հիման վրա ձեռքբերել կիբեռլաբորատորիա, որը կապահովի ոչ միայն համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այլ նաև ընդհանուր առմամբ՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի ոլորտում Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության պատշաճ տեխնիկական և ծրագրային ապահովումը:

69. Նկատի ունենալով համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության առանձնահատկությունները՝ ի համեմատություն ինչպես այլ եղանակներով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ այլ կիբեռհանցագործությունների՝ անհրաժեշտ է իրականացնել Քննչական կոմիտեի կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության և Գլխավոր դատախազության վերաբերելի ստորաբաժանման անձնակազմի վերապատրաստումներ՝ համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության արդի միտումների և այս դեպքերի քննության առանձնահատկությունների թեմաներով:

4.4. Ռազմավարական ուղղություն 9. Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների զարգացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում

70. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ արձագանքը ենթադրում է նաև իրավասու մարմիններին լրացուցիչ գործիքակազմի տրամադրում, ինչպես նաև տարբեր իրավապահ մարմինների միջև սահուն փոխգործակցության ապահովում: Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

1) միջազգային չափանիշների և վերաբերելի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա գնահատել ոստիկանության պարեկային ծառայության կարգախմբերի կողմից սթափության վիճակի ստուգումից բացի նաև սքրինինգային թեստավորման եղանակով թմրամիջոցի գործածման փաստի ստուգման հնարավորություն ներդնելու անհրաժեշտությունը: Սքրինինգային թեստավորումն ավելի արդյունավետ է, քան սթափության վիճակի ստուգումը և կարող է բացահայտել թեստավորմանը նախորդող ավելի երկար ժամանակահատվածում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թմրամիջոցների

գործածման փաստը: Միաժամանակ, միանշանակ չէ նման թեստավորում իրականացնելու անհրաժեշտությունը, քանի որ հստակ չէ՝ որքանով կարող են նման թեստավորումը և դրա հիման վրա, օրինակ, անձին վարչական պատասխանատվության ենթարկելն իրավաչափ համարվել, եթե անձը, չնայած և տրանսպորտային միջոց վարելուն նախորդած որոշակի ժամանակահատվածում գործածել է թմրամիջոց, սակայն տրանսպորտային միջոցը վարելու պահին գտնվում է սթափ վիճակում: Ըստ այդմ, կարևոր է այս հարցի շուրջ համապարփակ ուսումնասիրության իրականացումը, որի արդյունքներով միայն հնարավոր կլինի որոշել նման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը.

2) իրականացնել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների և փորձագետների շարունակական վերապատրաստումներ: Մասնավորապես, կարևոր է ինչպես հետաքննության և նախաքննության մարմինների, այնպես էլ դատաքիմիական (թունաբանական) փորձաքննություն իրականացնող փորձագետների վերապատրաստումը, որը կապահովի ոլորտում վերջին զարգացումների, նոր թմրատեսակների, հանցավոր կազմակերպությունների կողմից կիրառվող նոր մեթոդների և մեխանիզմների վերաբերյալ նրանց գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացումը: Իրավապահ մարմինների վերապատրաստումները պետք է ներառեն նաև գենդերային զգայունության տարրեր՝ ապահովելով, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը քրեական արդարադատության համակարգի արձագանքը գենդերարձագանքող լինի՝ հասցեագրելով տարբեր գենդերի անձանց առանձնահատուկ կարիքները և մարտահրավերները.

3) ներդնել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և այլ իրավախախտումների ու դրանք կատարած անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգ, որի միջոցով կիրականացվի նաև տեղեկատվության փոխանակումը: Նման համակարգի կիրառումը թույլ կտա մեկտեղել տարբեր պետական մարմինների հավաքագրած տվյալները, ինքնաշխատ կերպով վերլուծել դրանք՝ վերհանելով հնարավոր տենդենցներն ու դեպքերի բացահայտման տեսանկյունից կարևորություն ունեցող հանգամանքները.

4) կատարելագործել Ներքին գործերի նախարարության ոստիկանության և Պետական եկամուտների կոմիտեի կինոլոգիական ծառայության կարողությունները՝ ներգրավելով նոր, առավել արդյունավետ շնատեսակներ:

4.5. Ռազմավարական ուղղություն 10. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում և հանրային ծառայությունում թմրամիջոցների չարաշահման դեմ պայքար

71. Թմրամիջոցների չարաշահման և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է նաև պետական ապարատում թմրամիջոցների չարաշահման նկատմամբ անհանդուրժողականությունը: Օրենքների նկատմամբ հարգանքը և օրինաչափ վարքագծի դրսևորումը հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների հիմքն են և կազմում են բարեվարքության համակարգի կարևոր բաղադրիչը: Ընդ որում, հանրային ծառայողները և հանրային պաշտոն զբաղեցնող անձինք նաև պարտավոր են չդրսևորել այնպիսի վարքագիծ, որը կարող է վնասել հանրային իշխանության հեղինակությանը: Ուստի, նրանց կողմից թմրամիջոցների գործածման և չարաշահման բացառումը բխում է պետական ապարատում բարեվարքության բարձր նշաձողի սահմանման և պահպանման հրամայականից: Ըստ այդմ, անհրաժեշտ է միջազգային չափանիշների և այլ պետությունների լավագույն փորձի հիման վրա իրականացնել ուսումնասիրություն, որը կանդրադառնա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ թմրամիջոցի գործածման պարբերական թեստավորում անցնելու պարտականության նախատեսման հնարավորության հարցին:

72. Ուսումնասիրությունը պետք է անդրադառնա այն հարցին, թե որ հանրային պաշտոնների և հանրային ծառայության որ տեսակների պարագայում նման պարտականության նախատեսումը կարող է հիմնավոր և իրավաչափ լինել: Ընդ որում, պետք է բացառվի հանրային ծառայության բոլոր տեսակների և բոլոր հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար նման պարտականության նախատեսումը: Պարտականության նախատեսումը պետք է ուղղակիորեն փոխկապակցվի տվյալ ծառայության տեսակի կամ հանրային պաշտոնի պարագայում թմրամիջոցների գործածման հետ կապված ռիսկայնության մակարդակի հետ: Այլ խոսքերով, նման պարտականություն կարող է նախատեսվել միայն այն հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության այն տեսակների համար, որոնց դեպքում թմրամիջոցների գործածումը հատկապես մեծ ռիսկեր է ենթադրում (օրինակ՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց, դատախազությունում և

քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, հարկային և մաքսային ծառայության և այլն): Ուսումնասիրության շրջանակներում կարող է դիտարկվել նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձանց համար նման պարտականություն նախատեսելու նպատակահարմարությունը:

73. Ուսումնասիրությունը պետք է անդրադառնա նաև հանրային պաշտոնում նշանակվելուն հավակնող անձանց համար մինչև նշանակումը թմրամիջոցի գործածման թեստավորում անցնելու պարտականություն նախատեսելու հնարավորությանը: Ուսումնասիրությունը պետք է դիտարկի նշված ինստիտուտների ներդրման իրավաչափությունը անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի և դրա բաղադրիչը հանդիսացող՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքների տեսանկյունից:

4.6. Ռազմավարական ուղղություն 11. Ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում

74. Նկատի ունենալով թմրամիջոցների ապօրինի շրջանառության անդրազգային բնույթը՝ հատկապես կարևոր է այս ոլորտում միջազգային համագործակցությունը: Հայաստանի Հանրապետությունն ակտիվ համագործակցություն է իրականացնում մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ներքո հիմնված կառուցակարգերի շրջանակներում: Այսպես՝

1) Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական, 1971 թվականի «Հոգեմետ նյութերի մասին», 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին», 2000 թվականի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիաներին.

2) 2021 թվականին Հայաստանը միացել է UNODC-WCO (World Container Organization) բեռնարկերի վերահսկման գլոբալ ծրագրին.

3) 2022 թվականի սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ ստորագրվել է 2022-2025 թվականների համագործակցության ճանապարհային քարտեզ, որի հիմնական կետերից մեկը վերաբերում է ազգային կարողությունների զարգացման, փորձի փոխանակման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության նոր մեթոդների և այլ ոլորտներում համագործակցությանը.

4) 2001 թվականից Հայաստանի Հանրապետությունում իրագործվում է Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագիրը, որը նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրով և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից.

5) 2020 թվականից Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Եվրոպայի խորհրդի՝ թմրանյութերի չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային համագործակցության խմբին (Պոմպիդու խումբ), որը թմրանյութերի դեմ պայքարի արդյունավետ քաղաքականություն իրականացնելու հնարավորություն է ընձեռում: Պոմպիդու խումբը խորհրդատվական փաստաթղթեր, ուղեցույցներ է մշակում, կազմակերպում է որակավորման բարձրացման դասընթացներ, իսկ դրա ներքո գործող ցանցերն օպերատիվ տվյալների հավաքագրման և փոխանակման գործիքներ են հանդիսանում.

6) Հայաստանը միացել է նաև 2000 թվականի նոյեմբերի 30-ի՝ «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրին, 2000 թվականի նոյեմբերի 30-ի՝ «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը, 2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների Խորհրդի ստորագրած՝ «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների նմուշների փոխանցման կարգի մասին» համաձայնագրին:

75. Ըստ այդմ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել վերոնշյալ համաձայնագրերի և կառուցակարգերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները շարունակաբար իրականացնելու և համագործակցությունը զարգացնելու ու ամրապնդելու ուղղությամբ:

76. Միաժամանակ, կարևոր է նաև զարգացնել այն երկրների իրավասու մարմինների հետ միջազգային համագործակցությունը, որոնց տարածքներն օգտագործվում են որպես թմրամիջոցների ապօրինի տեղափոխման տարանցիկ ուղիներ: Նկատի ունենալով թմրամիջոցների մաքսանենգության անդրսահմանային բնույթը՝ միայն Հայաստանի

Հանրապետության պետական մարմինների ջանքերը շատ դեպքերում չեն կարող բավարար լինել թմրամիջոցների ապօրինի շրջանառության ամբողջ շղթայի բացահայտման և հետագա շրջանառությունը խոչընդոտելու համար: Ըստ այդմ, անհրաժեշտ է հաստատել կայուն և արդյունավետ հաղորդակցության ուղիներ այն պետությունների¹⁰ իրավասու մարմինների հետ, որոնք առավել ռիսկային են Հայաստանի Հանրապետության տարածք թմրամիջոցների ապօրինի ներմուծման տեսանկյունից:

5. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾԱԾՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

77. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների հասցեագրման և թմրամիջոցների գործածման հետ կապված՝ առողջական և սոցիալական բացասական հետևանքների մեղմման համար առաջնային նշանակություն ունի թմրամիջոցներ գործածող անձանց անհրաժեշտ աջակցության տրամադրումը: Սա ներառում է եթիկական, ապացուցահեն, իրավունքահեն, առողջության պահպանման վրա կենտրոնացած և համապարփակ բուժման, ինչպես նաև վերականգման մոտեցմամբ առաջնորդվող աջակցության (recovery approach) ծառայությունների առկայություն, որոնք կարող են ապահովել անձի ամբողջական սոցիալական վերաինտեգրումը և նվազեցնել ռեցիդիվի (relapse) ռիսկը:

78. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները համարվում են բազմագործոն խանգարումներ, որոնք հաճախ զուգորդվում են ռեցիդիվով և քրոնիկական հիվանդություններով: Տարբեր սոցիալ-հոգեբանական հանգամանքներ նպաստում են ոչ միայն թմրամիջոցների գործածումն սկսելուն, այլ նաև թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորմանը: Ընտանիքի հետ կապված

¹⁰ Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության հարցերն արդեն իսկ ներառված են Հայաստանի Հանրապետության և մի շարք պետությունների հետ կնքված երկկողմ պայմանագրերում: Մասնավորապես, նման համաձայնագրեր են կնքվել Լեհաստանի Հանրապետության (2004թ.), Կիպրոսի Հանրապետության (2006թ.), Եգիպտոսի Արաբական Հանրապետության (2007թ.), Չեխիայի Հանրապետության (2014թ.) կառավարությունների հետ, ինչպես նաև Լատվիայի Հանրապետության (1992թ.), Էստոնիայի Հանրապետության (1992թ.), Ուկրաինայի (1992թ.), Ղրղզստանի Հանրապետության (1993թ.), Բելառուսի Հանրապետության (1994թ.), Թուրքմենստանի (1994թ.), Ֆրանսիայի Հանրապետության (1995թ.), Մոլդովայի Հանրապետության (1995թ.), Ուզբեկստանի Հանրապետության (1995թ.), Յուգոսլավիայի Հանրապետության (1996թ.), Բուլղարիայի Հանրապետության (1999թ.), Ռումինիայի (2001թ.), Ռուսաստանի Դաշնության (2005թ.), Տաջիկստանի Հանրապետության (2005թ.), Իտալիայի Հանրապետության (2010թ.), Սիրիայի Արաբական Հանրապետության (2010թ.), Վրաստանի (2011թ.), Իրանի Իսլամական Հանրապետության (2012թ.), Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (2015թ.) համապատասխան իրավապահ մարմինների հետ:

հանգամանքները, ինչպիսիք են վաղ մանկության տարիքում անտեսումը, երեխայի նկատմամբ բռնությունը և ծնողների կողմից թմրամիջոցների գործածումը, կարող են նպաստել թմրամիջոցների գործածմանը և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորմանը:

79. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման տեսանկյունից խոցելիությունը բարձրացնող ռիսկային հատկանիշների թվում նաև անձի սոցիալ-տնտեսական վիճակն է: Մասնավորապես, ռիսկային խմբերի թվում են որոշակի բնակության վայր չունեցող կամ սոցիալապես անապահով մարդիկ: Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումները կարող են արդյունավետ կերպով արձանագրվել առողջապահական և սոցիալ-հոգեբանական ապացուցահեն միջամտությունների համակցության կիրառմամբ, ինչպես նաև ցուցաբերելով անհատական մոտեցում և հասցեագրելով յուրաքանչյուր անձի առանձնահատուկ կարիքները:

80. Միաժամանակ, կարևոր է ծրագրերի իրականացումը, որոնք ուղղված կլինեն վերականգման կառավարմանն աջակցելուն, որը նաև կոչվում է հետբուժական վերականգնում, շարունակական վերականգնում կամ սոցիալական աջակցություն՝ ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներին համապատասխան: Սա ենթադրում է թմրամիջոցներ գործածող անձանց առողջությունը և բարեկեցությունն ամրապնդող երկարաժամկետ գործընթացի իրականացում, ինչպես նաև թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներից նրանց վերականգնմանն աջակցություն: Վերականգնման մոտեցմամբ տրամադրվող աջակցությունը թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների երկարաժամկետ բուժման զարգացող, ինչպես նաև սոցիալական առումով՝ անձնային և համակարգային հիմնահարցերի շուրջ աշխատանքի մոտեցում է, որը չի սահմանափակվում առանձին դեպքերի հասցեագրմամբ կամ հետբուժական կարճաժամկետ ծրագրերով: Այն պետք է ներառի ոչ միայն առողջապահական, այդ թվում՝ դեղաբանական, սոցիալ-հոգեբանական և շրջապատող միջավայրի հետ կապված միջամտություններ, այլ նաև զբաղվածության հարցում աջակցություն, ինչը կնպաստի անձի վերականգնմանը, սոցիալական փոխհարաբերությունների հաստատմանը, անձնային և համակարգային ռեսուրսների վերհանմանը:

81. Կարևոր է ոչ միայն գիտականորեն ապացուցված մեթոդաբանության և չափանիշների վրա հիմնված էթիկական առողջապահական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների առկայությունը, այլև դրանց մատչելիությունը: Զեկույցի համաձայն՝ 2022

թվականի դրությամբ ամբողջ աշխարհում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող յուրաքանչյուր 11 անձից մեկն է ստացել անհրաժեշտ բուժում: Ընդ որում, բուժում ստացողների հարաբերակցությունն ավելի քիչ է կանանց դեպքում. թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող յուրաքանչյուր 18 կանանցից մեկն է ստանում անհրաժեշտ բուժում, իսկ տղամարդկանց դեպքում բուժում է ստանում յուրաքանչյուր 7 անձից մեկը:

82. Այս տեսանկյունից կարևոր է, որ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժումը հավասարապես հասանելի լինի ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, ինչպես նաև՝ որ այն հաշվի առնի տարբեր գենդերի անձանց բուժման և վերականգման առանձնահատկությունները՝ կապված ինչպես ֆիզիոլոգիական տարբերությունների, այնպես էլ սոցիալական դերերի հետ: Մասնավորապես, որոշ դեպքերում կանայք և տղամարդիկ տարբեր պատճառներով են սկսում գործածել թմրամիջոցներ կամ ձևավորում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ: Զեկույցի համաձայն՝ հետազոտությունները վկայում են որոշակի տարբերությունների առկայության մասին, օրինակ, նյարդակենսաբանական հանգամանքների տեսանկյունից (կապված սթրեսի և պարգևատրման (reward) նկատմամբ նյարդային համակարգի ադապտացիայի հետ): Բացի այդ, հետազոտությունները նաև վկայում են, որ հնարավոր է, որ էստրոգենն ու պրոգեստերոնը և դաշտանային ցիկլի ընթացքում դրանց փոփոխվող մակարդակներն անդրադառնում են թմրամիջոցների «պարգևատրող» ազդեցության նկատմամբ կանանց զգայունության վրա:

83. Թմրամիջոցների գործածումը նաև տարբեր ազդեցություն կարող է ունենալ կանանց և տղամարդկանց վերարտադրողական առողջության վրա, ուստի կարևոր է, որ բուժման ծրագրերը հասցեագրեն նաև կանանց վերարտադրողական առողջության խնդիրները, ներառյալ՝ կապված հղի կանանց կողմից թմրամիջոցների գործածման հետ:

84. Անդրադառնալով թմրամիջոցների գործածման պատճառներին և սոցիալական դերերին՝ հարկ է նկատել, որ Զեկույցի համաձայն՝ թմրամիջոցներ գործածող զուգընկերոջ առկայությունը կանանց դեպքում թմրամիջոցների գործածման ռիսկային հանգամանք է: Միաժամանակ, թմրամիջոցներ գործածող կանայք ավելի խոցելի են տրավմայի ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվելու տեսանկյունից:

85. Բուժման մատչելիության տեսանկյունից կարևոր է նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձնակազմի զգայունության ապահովումը և բնակչության

տարբեր խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքի և խարանի բացառումը (այդ թվում՝ պայմանավորված սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ կամ կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցելու հանգամանքով): Բացի այդ, առանցքային է նաև բուժման գրավչության և ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներին դրա համապատասխանության ապահովումը:

86. Թմրամիջոցների գործածմանն առողջապահական համակարգի արձագանքը պետք է նաև ներառի հանրային առողջության տեսանկյունից հնարավոր բացասական հետևանքների մեղմումը, ինչպես, օրինակ, գերդոզավորման և արյան միջոցով փոխանցվող վարակների (օրինակ՝ ՄԻԱՎ, հեպատիտ B և C) կանխումը: Հայաստանի Հանրապետությունում ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմում է 2.6%, իսկ հեպատիտ C-ի տարածվածությունը՝ 27.4%: Հարկ է նկատել, որ ՄԻԱՎ-ի հակազդմանը և ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված պետական քաղաքականությունն արտացոլվել է Առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 31-ի թիվ 375-Լ հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026 թվականների միջոցառումների ծրագրով:

87. Ինչպես թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ընդհանուր բուժման, այնպես էլ գերդոզավորման կանխման և դրա հետևանքների վերացման տեսանկյունից կարևոր է բժշկական նպատակներով որոշակի թմրամիջոցների, մասնավորապես, մեթադոնային բուժման հասանելիության ապահովումը:

5.1. Ռազմավարական նպատակ 12. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման, անհրաժեշտ աջակցող ծառայությունների տրամադրում և հանրային առողջության ապահովում

88. Թմրամիջոցներ չարաշահող անձանց բժշկական օգնության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 6-րդ գլխով: Այսպես, օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան կասկածելու, որ տառապում է թմրամոլությամբ, գտնվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ազդեցության տակ կամ առանց բժշկի նշանակման օգտագործում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ուղարկվում է բժշկական հետազոտման՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Նշված անձինք ենթակա են պարտադիր հետազոտման և բուժման:

89. Նույն օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ անձը, որն առանց բժշկական նշանակման, հազվադեպ կամ կարճատև ժամկետում կանոնավոր գործածում է թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, և որը, ըստ բժշկական քննման, ամբուլատոր կամ ստացիոնար հետազոտման, զերծ է կայուն, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն ձեռք բերելու անմիջական վտանգից, ենթակա է բժշկական կարճատև դիտարկման: Բժշկական երկարատև դիտարկման են ենթակա այն անձինք, որոնք ընդունել են կամավոր, պարտադիր կամ հարկադիր բուժման կուրս և լրիվ կամ մասնակի ապաքինվել են: ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1599-Ն որոշման համաձայն՝ բժշկական դիտարկումը դադարեցվում և «թմրամոլ» ախտորոշումն ստացած անձինք հաշվառումից հանվում են 5 տարի կայուն ռեմիսիայի (լավացման) դեպքում:

90. Օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ թմրամոլությամբ այն հիվանդին, որն առանց բժշկական նշանակման կանոնավոր գործածում է թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ձեռք է բերել ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել է «թմրամոլություն» ախտորոշումը, սակայն ի վիճակի է, թեկուզ ժամանակավորապես, ինքնուրույն հաղթահարել թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը, ցուցաբերվում է կամավոր, պարտադիր կամ հարկադիր բժշկական օգնություն: Միաժամանակ, այն անձանց, որոնք առանց բժշկական նշանակման անընդհատ գործածում են թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ձեռք են բերել անդառնալի, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել «թմրամոլություն» ախտորոշումը և ի վիճակի չեն, թեկուզ ժամանակավորապես, առանց բժշկական միջամտության հաղթահարել թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը, ցուցաբերվում է պարտադիր կամ հարկադիր անհետաձգելի բժշկական օգնություն:

91. Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցներ գործածող անձանց վերաբերյալ հետազոտությունների արդյունքում հավաքագրված արդիական վիճակագրական տվյալներ առկա չեն՝ թմրամիջոցներ գործածող անձանց թվի հիմնական ցուցիչը «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառված անձանց թիվն է: Ըստ Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տվյալների՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ

հաշվառված է եղել 7772 անձ, որոնցից՝ 180 կին և 7 անչափահաս, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7801 անձ, որոնցից 183 կին և 8 անչափահաս:

92. 2021 թվականին Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի կողմից իրականացվել են «Ինտեգրված կենսաբանական և վարքագծային հետազոտություն և հիմնական խմբերի չափերի գնահատումներ» ԹՆՕ-ների շրջանում: Ըստ այս հետազոտության՝ ԹՆՕ-ների ընդհանուր թիվը կազմում է մոտ 14110, որից 13712-ը՝ տղամարդիկ և 398-ը՝ կանայք:

93. Առողջապահության ազգային ինստիտուտի՝ Թմրամիջոցների վերաբերյալ 2022 թվականի զեկույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում տրամադրվում է հետևյալ բուժհաստատություններում՝ Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում, «Լոռու մարզային հոգեոյաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ում, Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում: Հանրապետության մյուս մարզերում, որտեղ չկան համապատասխան դիսպանսերներ, նարկոլոգիական ծառայությունն իրականացվում է բժշկական կենտրոնների պոլիկլինիկաների հոգեբուժական կամ թմրաբանական կաբինետների համապատասխան բժշկի (հոգեբույժ կամ թմրաբան, առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության բժիշկ) կողմից, որոնք կատարում են դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության գործառույթներ՝ իրականացնելով միայն բժշկական դիտարկում ու արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում: Թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող մասնագիտացված հաստատությունների նման սակավաքանակությունը լուրջ մարտահրավերներ է ստեղծում բուժման մատչելիության տեսանկյունից: Բուժումը պետք է տրամադրվի հանրային առողջության մոտեցմամբ՝ ապահովելով առավել արդյունավետ, նվազ ինվազիվ և նվազ ծախսատար միջամտությունները՝ ՄԱԿ ԹՀԳ և ԱՀԿ չափանիշներով նախատեսված՝ բուժման բուրգային կազմակերպման (treatment pyramid organisation) համակարգին համապատասխան:

94. Բուժման մատչելիության խնդիրն էլ ավելի է սրվում՝ նկատի ունենալով, որ ափիոնատիպ նյութերից կախվածություն ունեցող անձանց մեթադոնային փոխարինող բուժում տրամադրվում է միայն «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն ՓԲԸ-ում, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում, «Լոռու մարզային

հոգենյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ում և «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց՝ քրեակատարողական հիմնարկներում:

95. Մեթադոնային փոխարինող բուժման անհնարինության դեպքում իրականացվում է թմրամիջոցների դետոքսիֆիկացիոն բուժում, որի արդյունավետությունը բավականին ցածր է. բուժման ավարտից հետո թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձինք հիմնականում վերսկսում են թմրամիջոցների գործածումը:

96. Անդրադառնալով հանրային առողջության ապահովմանը՝ հարկ է նկատել, որ այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի համապարփակ գնահատում ներկայումս չի իրականացվում: Մասնավորապես, օրինակ, խնդրահարույց է այն հանգամանքը, որ Հայաստանում չի մշակվել թմրամիջոցների գործածման հետ կապված մահացության հստակ մեթոդաբանություն, և ըստ այդմ՝ բացակայում են 2000 թվականի Լիսաբոնյան համաձայնությամբ ընդունված 5 հիմնական համաճարակաբանական ցուցանիշներից թմրամիջոցների գործածման հետ կապված մահացության վերաբերյալ տեղեկությունները:

97. Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է՝

1) իրականացնել բժշկական հաստատությունների հիվանդանոցային պայմանների հետ կապված կարիքների գնահատում և գնահատման արդյունքներով բարելավել հիվանդանոցային պայմանները: Գնահատումը պետք է հաշվի առնի տարբեր խմբերի պացիենտների, ներառյալ՝ կանանց և աղջիկների հատուկ կարիքները:

2) իրականացնել թմրաբանական բաժանմունքի և թմրաբանական կաբինետի տեխնիկական պահանջների վերանայում՝ համապատասխանեցնելով լիցենզավորման համար պահանջվող սարքավորումների ցանկը միջազգային չափանիշներին:

3) իրականացնել թմրաբանական ոլորտի մասնագետների գիտելիքների և հմտությունների գնահատում և գնահատման արդյունքների հիման վրա մշակել թմրաբանության ոլորտի մասնագետներ պատրաստող կրթական հաստատությունների զարգացման հայեցակարգ՝ ապացուցահեն, էթիկական, առողջության պահպանման, բազմամասնագիտական թիմով աշխատելու, այդ թվում՝ սոցիալական ոլորտի մասնագետների հետ համագործակցության զարգացման վրա կենտրոնացող բուժման ապահովման նպատակով:

4) վերոնշյալ կարիքների գնահատման հիման վրա վերանայել թմրաբանության ոլորտի ավագ և միջին բուժաշխատողների (այդ թվում՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմի) վերապատրաստման նյութերը և իրականացնել վերապատրաստումներ:

5) ընդլայնել մեթադոնային փոխարինող բուժման հասանելիությունը՝ պետական բյուջեով նախատեսելով այս առնչությամբ լրացուցիչ միջոցներ և ապահովել տարեկան առնվազն 1500 անձի անվճար մեթադոնային փոխարինող բուժման տրամադրումը:

6) վերանայել թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման չափորոշիչը, ինչպես նաև դրա շրջանակներում դիսպանսերային և հիվանդանոցային ծառայությունների իրականացման կարգը:

7) Եվրոպական միության թմրամիջոցների գործակալության և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից առաջարկվող չափանիշների և մեթոդաբանության հիման վրա հաստատել թմրամիջոցների գործածման համաճարակաբանական ցուցանիշների ցանկն ու դրանց գնահատման կարգը և իրականացնել պարբերական գնահատումներ՝ Լիսաբոնյան համաձայնությամբ սահմանված չափանիշներին համահունչ:

8) լավարկել նորակոչիկների, ժամկետային և պայմանագրային զինծառայողների համար թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ապացուցահեն, էթիկական և առողջության պահպանման վրա կենտրոնացած բուժման մեխանիզմները՝ գործնականում առկա խնդիրներն ուսումնասիրելով և դրանց հիման վրա ռազմաբժշկական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումներ իրականացնելով:

5.2. Ռազմավարական ուղղություն 13. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմամբ պայմանավորված խանգարումներ կամ վարքային ու սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց կայուն վերականգնման աջակցություն և սոցիալական վերաինտեգրում

98. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ «թմրամոլ» ախտորոշումն ունեցող անձանց տրամադրվող բժշկական օգնությունը ներառում է, ի թիվս այլնի, բժշկասոցիալական վերականգնումը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում պետության կամ պետության կողմից պատվիրակված կազմակերպությունների կողմից համակարգված կերպով չեն մատուցվում անձանց կայուն

վերականգնման աջակցությանը և սոցիալական վերաինտեգրմանը (ներառյալ՝ կրթությանն ու զբաղվածությանը) ուղղված ծառայություններ:

99. Ներկայումս բուժմանը զուգահեռ այլ աջակցման ծառայություններ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց տրամադրվում են «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում: Մասնավորապես, բոլոր պացիենտներին՝ անկախ տրամադրվող բուժման տեսակից և ռեժիմից, տրամադրվում է թերապևտի, նյարդաբանի, հոգեբանի և սոցիալական աշխատողի խորհրդատվություն: Սոցիալական աջակցություն տրամադրվում է նաև ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից:

100. Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների հասցեագրման տեսանկյունից ամբողջ պետության տարածքում հասանելի, մասնագիտացված և բուժմանը զուգահեռ տրամադրվող կայուն վերականգնման աջակցության ծառայությունների առկայությունն ունի առաջնային նշանակություն: Ընդ որում, նման ծառայությունները պետք է հաշվի առնեն բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ անչափահասների, կանանց, տղամարդկանց, սոցիալապես անապահով անձանց, դատապարտյալների, կալանավորված անձանց, զինծառայողների, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց և այլ ռիսկային խմբերի առանձնահատկությունները:

101. Ինչ վերաբերում է Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին, ապա հարկ է նկատել, որ 2024 թվականի հուլիսի 3-ից գործարկվում է դատապարտյալների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքակազմ, որում առանձին բաժին է հատկացված վնասակար հակումների, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների գնահատման համար՝ ելնելով նման խանգարումներ ունեցող դատապարտյալների հետ վերասոցիալականացման աշխատանքներում զգայունության բարձրացման անհրաժեշտությունից և վերասոցիալականացման աշխատանքներում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների սոցիալական հետևանքների հաղթահարման կարևորությունից:

102. Այնուամենայնիվ, ազատությունից զրկված անձանց շրջանում թմրամիջոցների գործածման պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց հետ դրանց հաղթահարման ուղղությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության հստակ, միատեսակ ծրագրեր, մասնագիտական միջամտություն առկա չեն, և սոցիալ-հոգեբանական աջակցության

տրամադրումը սահմանափակվում է տվյալ անձի հետ անհատական հոգեբանական աշխատանք իրականացնելով:

103. Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

1) ամրագրել թմրամիջոցներ գործածող անձանց կայուն վերականգնման աջակցության (սոցիալ-վերականգնողական օգնության) տրամադրման ընթացակարգը՝ ենթաօրենսդրական ակտի տեսքով: Այս գործողության կատարման նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել վերաբերելի միջազգային չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրություն: Նշված ուսումնասիրության հիման վրա կներկայացվեն առաջարկություններ առ այն, թե ինչ մոդելով (ինչպիսի կազմակերպության կամ պետական մարմնի կողմից, ինչ ծառայությունների ներառմամբ) է ավելի նպատակահարմար իրականացնել կայուն վերականգնման աջակցությունը: Նման մոդելը կարող է ենթադրել, օրինակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության միջոցով վերականգնողական ծրագրերի իրականացում, բժշկական օգնություն և սպասարկում ու սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցող առանձին աջակցության կենտրոնների ստեղծում, վերականգնողական ծրագրերի իրականացման գործառույթի պատվիրակում, հավասարը հավասարին աշխատողի (peer worker) մոդելի ներդրում և այլն: Բացի այդ, անհրաժեշտ կլինի նաև իրականացնել վերականգնողական ծրագրերի հավանական շահառուների առողջական և սոցիալական կարիքների գնահատում, որի հիման վրա կներկայացվեն առաջարկություններ՝ կապված վերականգնողական ծրագրերի ներդրման հետ:

2) համագործակցության հուշագրերի կնքման միջոցով ապահովել թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության ու կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների, սոցիալական ապահովման ոլորտի իրավասու գերատեսչությունների և այլ դերակատարների միջև սերտ համագործակցությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկմամբ ներդնել միջոլորտային ծառայություններ, որոնք կապահովեն բազմամասնագիտական մոտեցումների միջոցով բուժումը և սոցիալական վերականգնումը:

3) միջազգային չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա ներդնել թմրամիջոցներ գործածող դատապարտյալների կայուն վերականգնման

աջակցության և սոցիալական վերաինտեգրման օրենսդրական մեխանիզմներ: Ազատությունից զրկված անձինք հատկապես խոցելի են թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ձևավորման և դրա հետ կապված խնդիրների տեսանկյունից, ներառյալ՝ ռելափսի, գերդոզավորման և դրանց արդյունքում մահվան ռիսկերի առումով: Ըստ այդմ, նրանց բուժումն ու սոցիալական վերականգնումն առանձնահատուկ մոտեցումների կարիք ունեն և հատկապես պետք է կենտրոնանալ պատժի ժամկետի ավարտին նախորդող շրջանում արդյունավետ միջամտությունների վրա, որոնք կնվազեցնեն նշված ռիսկերը.

4) իրականացնել քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների հոգեբանների և սոցիալական աշխատողների վերապատրաստում՝ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ, վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի թեմայով.

5) լավարկել անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման դեպքում հանրակրթական ուսումնական հաստատություններում մատուցվող՝ մանկավարժահոգեբանական աջակցման ծառայությունների որակը՝ նման ծառայությունների մատուցման մեթոդական ուղեցույցի մշակման և հանրակրթական ուսումնական հաստատությունների հոգեբանների վերապատրաստումների միջոցով.

6) միջազգային չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ, վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող նորակոչիկների, ժամկետային և պայմանագրային զինծառայողների համար ներդնել ապացուցահեն և էթիկական սոցիալ-հոգեբանական վերականգման ծրագրեր, ինչպես նաև վերջիններիս վարքագծի նկատմամբ հրամանատարական հսկողության տարբերակված մեխանիզմներ.

7) զարգացնել ընտանեկան և կենցաղային բռնության ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության ծառայություններ տրամադրող կազմակերպությունների աշխատակիցների կարողությունները՝ կապված թմրամիջոցներ գործածող ընտանեկան և կենցաղային բռնության կամ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության տրամադրման և ուղղորդման հետ:

6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

104. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի պատշաճ իրականացումը մշտադիտարկելու և գնահատելու նպատակով Վարչապետի որոշմամբ ստեղծվում է միջգերատեսչական խորհուրդ՝ Ներքին գործերի նախարարի նախագահությամբ (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհրդի կազմում ընդգրկվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալը, Արդարադատության նախարարի տեղակալը, Արտաքին գործերի նախարարի տեղակալը, Առողջապահության նախարարի տեղակալը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալը, Ներքին գործերի նախարարի տեղակալը, Պաշտպանության նախարարի տեղակալը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալը, Գլխավոր դատախազի տեղակալը, Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալը, Ազգային անվտանգության ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, Վիճակագրական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի, «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի, Գիտությունների ազգային ակադեմիայի, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի, Արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչները:

105. Խորհրդի կազմում մրցութային կարգով ընդգրկվում են նաև առնվազն 5 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց ներկայացվող պահանջները և ներգրավման կարգը սահմանվում են Վարչապետի որոշմամբ: Խորհրդի նիստին որպես հրավիրյալ անձինք կարող են մասնակցել նաև Ազգային ժողովի պատգամավորներ, այլ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատ փորձագետներ:

106. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի գործունեության կարգը սահմանվում է Վարչապետի որոշմամբ:

107. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունները համակատարող պետական մարմինները

պատասխանատու մարմինն են ներկայացնում յուրաքանչյուր գործողության կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Պատասխանատու կատարող պետական մարմիններն ամփոփում են յուրաքանչյուր գործողության կատարման առնչությամբ առկա տեղեկությունը և յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա առաջին 10 աշխատանքային օրվա ընթացքում Ներքին գործերի նախարարություն են ներկայացնում գործողությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը: Ներքին գործերի նախարարությունը յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա առաջին 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի կատարման կիսամյակային հաշվետվությունը, որը հաստատվում է Խորհրդի գրավոր կամ բանավոր նիստում:

108. Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվում և հաստատվում է սույն Ռազմավարության 107-րդ կետով սահմանված կարգով: Տարեկան և կիսամյակային հաշվետվությունները ներկայացվում են Վարչապետի աշխատակազմ և հրապարակվում են Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում:

109. Ռազմավարության 107-րդ և 108-րդ կետերում նշված հաշվետվությունների ձևերը սահմանվում են Վարչապետի որոշմամբ:

110. Խորհուրդը յուրաքանչյուր տարվա վերջում՝ տարեկան հաշվետվության հաստատման հետ մեկտեղ կարող է առաջարկներ ներկայացնել Ներքին գործերի նախարարությանը՝ վերանայելու Ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը՝ մշակելով մշտադիտարկման արդյունքների և առաջարկությունների վրա հիմնված համապատասխան փոփոխությունների նախագիծ:

111. Ելնելով Հայաստանի Հանրապետության հանձնառությունից՝ աջակցելու աշխարհում թմրամիջոցների շրջանառության հետ կապված խնդիրների հաղթահարման ուղղությամբ միջազգային համագործակցությանը, Ներքին գործերի նախարարությունը՝ որպես Խորհրդի քարտուղարություն, ապահովում է տարեկան զեկույցների, ներառյալ՝ արձանագրված խոչընդոտների, լավագույն փորձի և քաղված դասերի, ներկայացումը միջազգային հանրությանը վերաբերելի հարթակների միջոցով, ինչպիսին է ՄԱԿ-ի թմրամիջոցների հարցերով հանձնաժողովը: Հայաստանը վերահաստատում է միջազգային հանրության կողմից որդեգրված՝ միջազգային թմրամիջոցների դեմ պայքարի քաղաքականությունը որդեգրելու իր հանձնառությունը՝ գիտակցելով թմրամիջոցների հետ

կապված խնդիրների հաղթահարման հարցում համատեղ համաշխարհային պատասխանատվության առկայությունը: Խորհուրդը նպաստում է այս հարցերով բազմակողմ քննարկումների անցկացմանը՝ խթանելով համագործակցությունը և ներպետական քաղաքականության համապատասխանությունը միջազգային ռազմավարություններին և կոնվենցիաներին:

7. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

112. Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման կարիքը կազմում է 495.8 մլն դրամ: Ծրագրի ֆինանսավորման կարիքի գնահատականը ինդիկատիվ է: Այն կարող է ենթարկվել մինչև 10 տոկոս շեղման:

113. Ծրագրով նախատեսված է իրականացնել թվով 68 գործողություն: Նախատեսված գործողություններից 21-ը լրացուցիչ ֆինանսավորման կարիք չունեն. դրանք կիրականացվեն գործող բյուջետային ծրագրերի շրջանակներում:

114. Պետական բյուջեն կհանդիսանա թվով 2 գործողությունների ֆինանսավորման աղբյուր: Այս գործողություններին ուղղված ֆինանսական ռեսուրսները հաշվում են 275. 0 մլն դրամ և կազմում են ընդամենը Ռազմավարության իրականացման համար պահանջվող ծախսերի 55.5%-ը:

115. Ծրագրի մնացած 45 գործողությունները կարող են ֆինանսավորվել օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին: Հիմնականում այդպիսի աղբյուրներ են դիտարկվում դոնոր հանրույթի ռեսուրսները: Վերջիններիս նկատմամբ կարիքը գնահատվում է 220. 8 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման կարիքի 44. 5%-ը:

Աղյուսակ 1. Ռազմավարությունից բխող գործողությունների բաշխումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

	Գործողությունների քանակ	Միջոցառումների ֆինանսավորման կարիք, հազ. ՀՀ դրամ	Միջոցառումների ֆինանսավորման կշիռը Ծրագրի բյուջեում, տոկոս
Ընդամենը	68	495,820.0	100.0
Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	21	0. 0	0.0

Պետական բյուջե	2	275,000. 0	55. 5
Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	45	220,820. 0	44. 5

116. Ֆինանսական ռեսուրսների գերակշիռ մասը, կամ 58.3%-ը կուղղվի թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման ծառայությունների տրամադրմանը և հանրային առողջության ապահովմանը (Ուղղություն 12): Հաջորդում են Ուղղություն 1-ը (թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման կանխարգելում) և Ուղղություն 9-ը (իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների զարգացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում)՝ համապատասխանաբար 11.8% և 7.7% մասնաբաժիններով:

Աղյուսակ 2. Ծրագրի ծախսերի բաշխումն ըստ ռազմավարական ուղղությունների, հազար դրամ

Ռազմավարական ուղղություններ	Ֆինանսավորման կարիք, հազ. ՀՀ դրամ	Ֆինանսավորման կշիռը Ծրագրի բյուջեում, տոկոս
<i>Ուղղություն 1</i>	58,625	11.8
<i>Ուղղություն 2</i>	28,425	5.7
<i>Ուղղություն 3</i>	1,350	0.3
<i>Ուղղություն 4</i>	17,375	3.5
<i>Ուղղություն 5</i>	-	-
<i>Ուղղություն 6</i>	8,025	1.6
<i>Ուղղություն 7</i>	13,025	2.6

Ուղղություն 8	24,200	4.9
Ուղղություն 9	38,250	7.7
Ուղղություն 10	-	-
Ուղղություն 11	-	-
Ուղղություն 12	289,245	58.3
Ուղղություն 13	17,300	3.5
Ընդամենը	495,820	100.0

117. Նկատենք, որ պետական բյուջեից Ծրագրի ֆինանսավորման համար կարիքը կազմում է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների 55.5%-ը: Այս ծախսերը բացառապես նախատեսված է ուղղել թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց բուժման, վերականգնման և վնասի նվազեցման ծառայությունների տրամադրմանը և հանրային առողջության ապահովմանը:

118. Ծրագրի իրականացման ֆինանսավորման տեսանկյունից ծանրաբեռնված է 2027 թվականը, երբ կպահանջվի ծախսել ընդամենը գործողությունների ծրագրի իրականացման բյուջեի 49.1%-ը կամ 243.6 մլն դրամը:

Աղյուսակ 3. Ծրագրի ֆինանսական ամփոփ գնահատականն ըստ ֆինանսավորման աղբյուրների և տարիների, հազար դրամ

	Պետական բյուջե	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ընդամենը	Կշիռը ընդամենը Ծրագրի բյուջեում, տոկոս
2025թ.	-	45,908.3	45,908.3	9.3
2026թ.	112,500.0	93,825.0	206,325.0	41.6

2027թ.	162,500.0	81,086.7	243,586.7	49.1
Ընդամենը	275,000.0	220,820.0	495,820.0	100.0

119. Հաշվարկների հիմքում ընկած են որոշ ենթադրություններ և սահմանափակումներ.

1) գնահատված են Ռազմավարության իրականացման միայն լրացուցիչ ծախսերը, այսինքն՝ այն ծախսերը, որոնք, ի լրումն պետական մարմինների բյուջետային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման, լրացուցիչ անհրաժեշտ են սահմանված ծրագրային գործողությունների իրականացման համար (լրացուցիչ վերապատրաստումներ, փորձագիտական աջակցություն, իրազեկման միջոցառումներ, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում և այլն): Այն գործողությունները, որոնց իրականացումը լրացուցիչ ծախսեր չի պահանջում, և իրականացվում է կամ կարող է իրականացվել բյուջետային առկա ռեսուրսներով և գործող բյուջետային ծրագրերի շրջանակներում, գնահատման առարկա չեն.

2) Ծրագիրն ապահովում է առանձին գործողությունների և սահմանված արդյունքների լիարժեք նույնականացում, հետևաբար, ծախսերը գնահատվել են ըստ առանձին գործողությունների մակարդակում սահմանված արդյունքների.

3) փորձագիտական աշխատանքների կամ փորձագետների դասակարգում չի իրականացվել: Փորձագիտական ռեսուրսների ներգրավվածության հիմքում անալոգային հետազոտությունների միջին բեռնվածություններն¹¹ են: Ծախսային հաշվարկները ներկայացվել են միջին օրական դրույքաչափերի հիման վրա, որոնց գնահատման հիմքում գործող մի շարք խորհրդատվական ծրագրերի փորձագետների վարձատրության փաստացի դրույքաչափեր են.

4) ուղեցույցների մշակման, հետազոտությունների իրականացման, վերապատրաստման նյութերի և օրենսդրական փաստաթղթերի, հայեցակարգերի և այլնի մշակման ծախսերը ներառված են փորձագիտական ծախսերում.

5) իրազեկման նյութերի մշակման, իրազեկման արշավների և հեռուստահաղորդաշարերի, հանրային քննարկումների կազմակերպման և այլ ուղղակի

¹¹ Փորձագիտական գնահատականներ:

ծախսերը գնահատվել են՝ հիմք ընդունելով նույնատիպ ծառայությունների գործող գների վերաբերյալ հարցումների արդյունքները.

6) ոչ բյուջետային աղբյուրներից ֆինանսավորվող լրացուցիչ մասնագիտական վերապատրաստումների ծախսերի հիմքում պետական տարբեր ուսուցման կենտրոնների կողմից առաջարկված մեկ մասնակցի հաշվով օրական ծախսերի միջին գնահատականներն են: Խմբային գնահատականների հիմքում մեկ մասնակցի հաշվով նույն ծախսերն են՝ կախված խմբում ընդգրկված մասնակիցների թվաքանակից: Երկօրյա արտագնա դասընթացների հիմքում Երևանից դուրս հյուրանոցների կողմից մատուցվող համապատասխան ծառայությունների արժեքներն են (տարածքի վարձակալություն, գիշերակաց սնունդ և սուրճ, անհրաժեշտ նյութեր):

7) դրույքաչափերի հետագա հնարավոր փոփոխությունները, գնաճի կամ այլ գործոնների հնարավոր ազդեցությունները հաշվի չեն առնվել.

8) մի շարք գործողությունների մասով ծախսային գնահատումները պայմանական են. կարող են փոփոխվել իրականացման ընթացքում դրանց ծավալների և շահառուների շրջանակի հետագա հստակեցմամբ: Որոշ գործողությունների դեպքում էլ գնահատականների վերանայումը կարող է պայմանավորված լինել ծրագրով նախատեսվող կարիքների գնահատումների արդյունքներով:

Աղյուսակ 4. Ծրագրի ֆինանսական գնահատականն ըստ գործողությունների և իրականացման տարիների, հազար դրամ

NN ը/կ	Գործողություն	Պատասխ. պետական մարմին	Ֆինանսավոր- ման աղբյուր	Ընդամենը ֆինանսավ. կարիք, հազ. ՀՀ դրամ	2025	2026	2027
Ռազմավարական ուղղություն 1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման հետևանքների մասին բնակչության իրազեկում							
1.	Զանգվածային լրատվության և տեսալսողական մեդիայի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ իրականացվող միջոցառումների համակարգային լուսաբանում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,650.0	2,550.0	2,550.0	2,550.0
2.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման վնասների և վնասների նվազեցման կամ արձագանքման եղանակների վերաբերյալ տեղեկատվական արշավների իրականացում	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,650.0	2,550.0	2,550.0	2,550.0
3.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ սեռի, տարիքի և բնակության վայրի հիմքով դասակարգված տվյալների հավաքագրում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	20,650.0	2,083.3	17,525.0	1,041.7
4.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման, դրանց ապօրինի շրջանառության, թմրամիջոցների գործածման կանխարգելման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման կամ վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրների հաղթահարման վարչական տվյալների համապարփակ շտեմարանի մշակում, որը կներառի սեռի, տարիքի և բնակության վայրի հիմքով դասակարգված տվյալներ	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	12,000.0	-	8,000.0	4,000.0

5.	Թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված իրադարձությունների լուսաբանման առանձնահատկությունների և այս ոլորտներում պետության քաղաքականության վերաբերյալ լրագրողների իրազեկվածության բարձրացում, գործունեության զգայունության խթանում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,500.0	2,000.0	2,750.0	2,750.0
6.	Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառմանն ուղղված տեղեկատվական արշավի իրականացում	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,175.0		3,175.0	
Ռազմավարական ուղղություն 2. Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման և չարաշահման կանխարգելում							
7.	Անչափահասների և երիտասարդների շրջանում ֆոկլուս-խմբային քննարկումների անցկացում՝ կապված թմրամիջոցների գործածման հետ	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,725.0	575.0	575.0	575.0
8.	Անչափահասների և երիտասարդների արտաուսումնական զբաղվածության և հանգստի կազմակերպման ծրագրերի անցկացում	ԿԳՄՍՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	5,350.0		4,550.0	800.0
9.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատություններում առարկաներ դասավանդող անձանց գիտելիքների և հմտությունների լավարկում	ԿԳՄՍՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,750.0	-	1,850.0	900.0
10.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ դասարանների ուսումնական ծրագրերի՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման հետևանքների, արձագանքման եղանակների իրազեկմանն ու դրա կանխարգելմանն առնչվող դասընթացների ուսումնական նյութերի կատարելագործում	ԿԳՄՍՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-

11.	Անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման կանխարգելման, գործածման դեպքում աջակցության տրամադրման վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների, տնօրենների և երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների գիտելիքների և կարողությունների զարգացում	ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,250.0	1,250.0	2,000.0	4,000.0
12.	Անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) և խնամատար ծնողների (այդ թվում՝ խնամքի կենտրոններում գտնվող երեխաների օրինական ներկայացուցիչների) համար դասընթացների և այլ իրազեկման միջոցառումների անցկացում	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,750.0	1,750.0	500.0	500.0
13.	Թմրամիջոցների գործածման և դրա վնասների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և պաստառների տպագրում ու տարածում անչափահասների և երիտասարդների շրջանում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,000.0	3,500.0		3,500.0
14.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում թմրամիջոցների գործածման սքրինինգային թեստավորման մեխանիզմ ներդնելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
15.	Անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) և խնամատար ծնողների համար թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների մշակում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,200.0	400.0	400.0	400.0

16.	Անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար համացանցի ռիսկային ռեսուրսներ (կայքեր) մուտք գործելն արգելափակող կամ սահմանափակող համապատասխան հավելվածների հնարավորությունների, օգտակարության և դրանցից օգտվելու կարգի, ինչպես նաև անվտանգ կայքերի վերաբերյալ տեղեկատվական տեսահոլովակի պատրաստում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	400.0	400.0	-	-
Ռազմավարական ուղղություն 3. Դատապարտյալների և ազատությունից զրկված այլ շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելում							
17.	Քրեակատարողական հիմնարկների, կալանավորվածներին պահելու վայրերի և ձերբակալվածների պահման վայրերի՝ թմրամիջոցների հայտնաբերման տեխնիկական հագեցվածության բարելավում	ԱՆ, ՆԳՆ, ԱԱԾ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
18.	Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համար որոշակի պարբերականությամբ թմրամիջոցների գործածման թեստավորում կամ փորձաքննություն անցնելու պարտականություն նախատեսելու և թեստավորման արդյունքները դատապարտյալի հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների գնահատման հարցում օգտագործելու հնարավորության ուսումնասիրում և համապատասխան ինստիտուտի նախատեսում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
19.	Դատավճռով թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցանքների, ինչպես նաև թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում հանցանք կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ բուժման և սոցիալական վերականգնման ծառայություններ ստանալու պարտականություն ենթադրող անվտանգության միջոց կիրառելու ինստիտուտի նախատեսման անհրաժեշտության և հնարավորության ուսումնասիրում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
20.	Ազատությունից զրկված անձանց շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում իրականացնելու նպատակով դասավանդողների ուսուցում	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	100.0	100.0		

21.	Ազատությունից զրկված անձանց շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման շարունակում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
22.	Ազատագրված և անվտանգ կյանքի կապահովման ծրագրի շրջանում հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների վերաբերյալ դասաժամերի ներառում	ԱՆ, ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
23.	«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության» ծրագրում «Առողջ ապրելակերպ» առարկայի ներառում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	1,250.0		1,250.0	
Ռազմավարական ուղղություն 4. Հինձառայողների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելում							
24.	Հինձառայողների ուսումնական ծրագրերում, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների վերաբերյալ թեմաների ներառում, ինչպես նաև վերջիններիս համար պարբերական թեմատիկ դասընթացների կազմակերպում և այդ դասընթացների շրջանակում հրամանատարական կազմի վերապատրաստման նպատակով հրահանգիչների խմբի պատրաստում	ՊՆ, ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
25.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման հետևանքների վերաբերյալ զինձառայողների հետ պարապմունքներ անցկացնող հրամանատարական կազմի վերապատրաստում	ՊՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	14,000.0	2,000.0	6,000.0	6,000.0
26.	Հինձառայողների կողմից թմրամիջոցներ ձեռք բերելու, դրանք զորամասեր ներմուծելու և ապօրինի գործածելու հնարավոր դեպքերի կանխարգելման դրական արդյունքներ արձանագրած երկրների փորձի ուսումնասիրում և ներդրում	ՊՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	1,875.0	-
27.	Հինձառայողների կողմից թմրամիջոցներ ձեռք բերելու, դրանք զորամասեր ներմուծելու և ապօրինի գործածելու հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով իրականացվող օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների մեթոդաբանության	ՊՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,500.0	1,500.0	-	-

	վերանայում և դրա հիման վրա ծրագրային և արտապլանային միջոցառումների իրականացում						
28.	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվողների և զինծառայողների կողմից թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելման մեխանիզմների սահմանում, այդ թվում՝ պարբերական ստուգումներ անցնելու հնարավորության կամ պարտականության սահմանում	ՊՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
Ռազմավարական ուղղություն 5. Թմրամիջոցների օրինական շրջանառությանը վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործում, ապօրինի թմրամիջոց գործածող անձանց համար սահմանափակումների նախատեսում							
29.	Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածումը և օրինական շրջանառությունը կանոնակարգող օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի կոնվենցիաների և միջազգային այլ փաստաթղթերի դրույթներին, ինչպես նաև թմրամիջոցների շրջանառության արդի միտումներին, այդ թվում՝ կապված բժշկական նպատակներով թմրամիջոցների օրինական շրջանառության հետ	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
30.	ՄԱԿ-ի թմրամիջոցների միջազգային վերահսկման գրասենյակի կողմից տրամադրված ցանկի հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ի հայտ եկած նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ընդգրկում Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա նյութերի ցանկում, ինչպես նաև դրանց չափերի փոփոխությունների կատարում	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
31.	«D» կարգի և «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցների վարորդների համար պարտադիր պարբերական թեստավորում անցնելու պարտականություն նախատեսելու, ինչպես նաև մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձանց վարորդական իրավունքի վկայականի ստացումը թույլատրելու հնարավորության ուսումնասիրում	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-

Ռազմավարական ուղղություն 6. Մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի ներկրման կանխարգելում							
32.	Պետական սահմանի անցման կետերում թմրամիջոցների հայտնաբերման տեխնիկական հագեցվածության բարելավում	ՊԵԿ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
33.	Մաքսային ծառայողների կարողությունների զարգացում՝ կապված թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտման, ներառյալ՝ արտերկրից փոստային առաքանիների և սուրհանդակային կապի միջոցով փոխադրվող բեռների հսկողության հետ	ՊԵԿ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,375.0	-	1,875.0	1,500.0
34.	Փոստային կապի օպերատորների կողմից փոստային առաքման վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրում՝ փոստային առաքման շրջանակներում թմրամիջոցների առաքումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով:	ՊԵԿ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
35.	Միջազգային հանցավոր խմբավորումների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ներգրավմամբ) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի օգտագործմամբ թմրամիջոցների տարանցման ուղիների մշտադիտարկման կատարելագործում	ՊԵԿ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,775.0	-	1,875.0	900.0
36.	Թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարի ընթացքում ծագած հիմնախնդիրների ու դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների ուսումնասիրություն	ՊԵԿ, ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	1,875.0	-
Ռազմավարական ուղղություն 7. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության դեպքերի առնչությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության և նախաքննության արդյունավետության բարձրացում							

37.	Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների, այդ թվում՝ սինթետիկ թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության, արդյունավետության բարձրացում, այդ թվում՝ կապված քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում դրանց ապօրինի ներթափանցման ուղիների բացահայտման հետ	ՆԳՆ, ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	1,875.0	-
38.	Անչափահասներին և երիտասարդներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավող անձանց հայտնաբերման մեթոդաբանության մշակում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,250.0	-	1,250.0	-
39.	Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության արդյունավետության բարձրացում	ԱՆ, ԳԴ, ՔԿ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,975.0	-	1,875.0	2,100.0
40.	Որոշակի առանձնահատկությունների հաշվառմամբ (օրինակ՝ էլեկտրաէներգիայի չհիմնավորված բարձր ծախս) շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի աճեցմամբ զբաղվող լաբորատորիաների հայտնաբերմանն ուղղված մեթոդական ուղեցույցի մշակում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	1,875.0	-
41.	Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների հոսքն օրինական շրջանառությունից դեպի ապօրինի շրջանառություն կանխարգելելու միջոցների վերաբերյալ ուսումնասիրության իրականացում	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	-	1,875.0
42.	Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի վերաբերյալ գաղտնիության պահպանմամբ ահազանգման մեխանիզմներ ստեղծելու հնարավորության և նպատակահարմարության ուսումնասիրում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	-	1,875.0

43.	Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի կոնվենցիաների և միջազգային փաստաթղթերի դրույթներին ու շրջանառության արդի միտումներին	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	300.0	-	-	300.0
44.	Ապօրինի շրջանառության բացահայտման առաջնահերթության տեսանկյունից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի դասակարգման սահմանում	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
Ռազմավարական ուղղություն 8. Համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելում							
45.	Համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում միջազգային առաջավոր փորձի և վերաբերելի օրենսդրական, ներառյալ՝ քրեաիրավական կարգավորումների ուսումնասիրում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	300.0	-	-	300.0
46.	Համացանցում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդող իրավապահ մարմինների նյութատեխնիկական բազայի և ծրագրային հնարավորությունների վերազինում՝ կիբեռլաբորատորիայի ձեռքբերման միջոցով, ինչպես նաև իրավապահ մարմինների աշխատակիցների շարունակական վերապատրաստում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	18,400.0	16,875.0	925.0	600.0
47.	Քննչական կոմիտեի կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության և Գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կարողությունների զարգացում՝ կապված համացանցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի քննության հետ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	5,500.0	2,500.0	1,500.0	1,500.0
Ռազմավարական ուղղություն 9. Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների զարգացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում							
48.	Ոստիկանության պարեկային ծառայության կարգախմբերի կողմից սթափության վիճակի ստուգումից բացի նաև սքրինինգային թեստավորման եղանակով թմրամիջոցի գործածման փաստի ստուգման հնարավորություն ներդնելու անհրաժեշտության գնահատում	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,250.0	1,250.0	-	-

49.	Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների և փորձագետների շարունակական վերապատրաստումների իրականացում	ՆԳՆ, ԱՆ, ԱԱԾ, ՊԵԿ, ԳԱԱ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	15,000.0	-	7,500.0	7,500.0
50.	Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների) և ածանցյալների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների, այլ իրավախախտումների ու դրանց առնչվող անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգի ներդրում, որի միջոցով կիրականացվի նաև տեղեկատվության փոխանակումը	ՆԳՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	10,000.0	-	-	10,000.0
51.	Իրավապահ մարմինների կինոլոգիական ծառայության կարողությունների զարգացում	ՆԳՆ, ՊԵԿ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	12,000.0	-	-	12,000.0
Ռազմավարական ուղղություն 10. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում և հանրային ծառայությունում թմրամիջոցների չարաշահման դեմ պայքար							
52.	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ թմրամիջոցի գործածման պարբերական թեստավորում անցնելու, ինչպես նաև հանրային պաշտոնում նշանակվելուն հավակնող անձանց՝ մինչև նշանակումը թմրամիջոցի գործածման թեստավորում անցնելու պարտականությունների նախատեսման հնարավորության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
Ռազմավարական ուղղություն 11. Ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում							
53.	Միջազգային համագործակցության զարգացում այն երկրների իրավասու մարմինների հետ, որոնց տարածքներն օգտագործվում են որպես թմրամիջոցների ապօրինի տեղափոխման տարանցիկ ուղիներ	ՆԳՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում				
Ռազմավարական ուղղություն 12. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման, անհրաժեշտ աջակցող ծառայությունների տրամադրում և հանրային առողջության ապահովում							

54.	Թմրաբանական բժշկական հաստատությունների հիվանդանոցային պայմանների բարելավում	ԱռՆ	Պետական բյուջե	50,000.0	-	-	50,000.0
55.	Թմրաբանական բաժանմունքի և թմրաբանական կաբինետի տեխնիկական պահանջների վերանայում	ԱռՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
56.	Թմրաբանության ոլորտի մասնագետներ պատրաստող հաստատությունների գիտական և կրթական մակարդակի բարձրացում՝ ապացուցահեն, էթիկական, առողջության պահպանման վրա կենտրոնացող բուժման ապահովման նպատակով	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,300.0	1,500.0	2,500.0	300.0
57.	Թմրաբանության ոլորտի ավագ և միջին բուժաշխատողների (այդ թվում՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմի) վերապատրաստումների ապահովում	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,920.0	-	-	1,920.0
58.	Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ ունեցող անձանց անվճար մեթադոնային փոխարինող բուժման ընդլայնում	ԱռՆ	Պետական բյուջե	225,000.0	-	112,500.0	112,500.0
59.	Թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման չափորոշիչի, ինչպես նաև դրա շրջանակներում դիսպանսերային և հիվանդանոցային ծառայությունների իրականացման կարգի վերանայում	ԱռՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	-	1,875.0	-
60.	Թմրամիջոցների գործածման վերաբերյալ համաճարակաբանական տվյալների հավաքագրման նպատակով Լիսաբոնյան համաձայնությամբ հաստատված համաճարակաբանական ցուցանիշների պարբերական գնահատում՝ կիրառելով Եվրոպական միության թմրամիջոցների գործակալության և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից առաջարկվող չափանիշները և մեթոդաբանությունը	ԱռՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
61.	Նորակոչիկների, ժամկետային և պայմանագրային զինծառայողների համար թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների ապացուցահեն, էթիկական և առողջության պահպանման վրա կենտրոնացած բուժման մեխանիզմների լավարկում	ՊՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	6,150.0		3,750.0	2,400.0

Ռազմավարական ուղղություն 13. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմամբ պայմանավորված խանգարումներ, վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց կայուն վերականգնման աջակցություն և սոցիալական վերաինտեգրում							
62.	Թմրամիջոցներ գործածող անձանց կայուն վերականգնման աջակցության (սոցիալ-վերականգնողական օգնության) տրամադրման ընթացակարգի ամրագրում	ԱՍՀՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	5,000.0	-	2,500.0	2,500.0
63.	Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության ու կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների, սոցիալական ապահովման ոլորտի իրավասու գերատեսչությունների և այլ դերակատարների միջև սերտ համագործակցության ապահովում	ԱռՆ, ԱՍՀՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-
64.	Թմրամիջոցներ գործածող դատապարտյալների կայուն վերականգնման աջակցության և սոցիալական վերաինտեգրման ծրագրերի ներդրում՝ ուղղված պատժի կրումից հետո նրանց կողմից կրկին թմրամիջոցների գործածման կանխարգելմանը	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,175.0	1,875.0	300.0	-
65.	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների հոգեբանների և սոցիալական աշխատողների կարողությունների զարգացում՝ թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ, վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի թեմայով	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,150.0			2,150.0
66.	Անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման դեպքում հանրակրթական ուսումնական հաստատություններում մատուցվող՝ մանկավարժահոգեբանական աջակցման ծառայությունների լավարկում	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,950.0	1,250.0	1,200.0	1,500.0

67.	Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ, վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող նորակոչիկների, ժամկետային և պայմանագրային զինծառայողների համար ապացուցահեն և էթիկական սոցիալ-հոգեբանական վերականգման ծրագրերի, ինչպես նաև վերջիններիս վարքագծի նկատմամբ հրամանատարական հսկողության տարբերակված մեխանիզմների ներդրում	ՊՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,475.0	-	2,475.0	-
68.	Ընտանեկան և կենցաղային բռնության ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության ծառայություններ տրամադրող կազմակերպությունների աշխատակիցների կարողությունների զարգացում՝ կապված թմրամիջոցներ գործածող ընտանեկան բռնության կամ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության տրամադրման և ուղղորդման հետ	ԱՍՀՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,550.0	-	1,250.0	300.0
Ընդամենը				495,820	45,908	206,325	243,587

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ